

# ՈԼՍՈԼԳՅԻ ձեռնարկ

3

## Վերաբերմունքներ

Գնահատել և զարգացնել վերաբերմունքներ



Խմբային ոլսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար



---

---

# Վերաբերմունքներ

Գնահատել և զարգացնել վերաբերմունքներ

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում



**Վերաբերմունքներ**  
**Ուսուցչի ձեռնարկ**  
**5-րդ խմբագրում**  
**Յեդինակ՝ Դեյվիդ Բեթթի**

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Attitudes, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ [www.iTeenChallenge.org](http://www.iTeenChallenge.org): Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Մտուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge  
PO Box 511  
Columbus, GA, 31902 USA  
Email: [gtc@globaltc.org](mailto:gtc@globaltc.org)  
Web: [www.globaltc.org](http://www.globaltc.org)  
[www.iTeenChallenge.org](http://www.iTeenChallenge.org)



# Վերաբերմունքներ

Այս դասընթացը հիմք է դնում մի թեմայի համար, որը թեև ծանոթ է, սակայն շատ անգամ դժվար հասկանալի է նորադարձ քրիստոնյաների համար: Ինչպե՞ս են քրիստոնյաները «նորոգում իրենց մտքերը»:

# 1

**Գլուխ 1. Վերաբերմունքները նորադարձ քրիստոնյայի կյանքում**  
Ի՞նչ են վերաբերմունքները: Ինչպե՞ս են ես դրանք կիրառում իմ առօրյա կյանքում: Ինչպե՞ս են ես դրանք ձեռք բերում:

# 2

**Գլուխ 2. Նոր վերաբերմունքներ ձևավորելու ընթացքը**

Մենք ուսումնասիրում ենք մի քանի գործնական քայլեր նոր վերաբերմունքներ զարգացնելու համար: Մենք նաև նայում ենք, թե ինչպես է Աստվածաշնչի ուսումնասիրությունն առնչվում նոր վերաբերմունքներ զարգացնելուն ու հին վերաբերմունքները մի կողմ դնելուն:

# 3

**Գլուխ 3. Ճիշտ վերաբերմունքներ ունենալ, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում**

Ինչպե՞ս պետք է արձագանքես, երբ ինչ-որ մեկը հանդիմանում է քեզ: Մենք այս հարցին պատասխանում ենք՝ ուսումնասիրելով աստվածաշնչյան վերաբերմունքները, որոնք մենք կարող ենք կիրառել, երբ մեզ հանդիմանում են կամ քննադատում: Այս գլուխը նաև վերաբերում է այս նոր վերաբերմունքը կիրառելու հետ կապված խնդիրներին:

# 4

**Գլուխ 4. Ունենալ ճիշտ վերաբերմունք ուրիշին հանդիմանելիս**

Այս գլխում մենք քննարկում ենք, թե աստվածաշնչյան ինչպիսի վերաբերմունք պետք է ունենանք մարդկանց հանդիմանելիս: Ու՞մ պետք է հանդիմանես դու: Որո՞նք են այն լավագույն մեթոդները, որոնք կարող են կիրառվել մարդկանց հանդիմանելու ժամանակ: Ի՞նչ սահմանափակումներ է Աստվածաշունչը դնում մարդկանց հանդիմանելու հարցում:

## Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

## Նախարան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

## Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

### 1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ* -ի մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Մրա կարևորությունը չի կարող գերազանցապես լինել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզված

եղեք, որ բավականաչափ ժամանակ էք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող էք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

## 2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող էք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող էք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս էք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

## 3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

## 4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

## 5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

## Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

*Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

## Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ [www.iTeenChallenge.org](http://www.iTeenChallenge.org): Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք,



ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

## Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թուուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Մեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «*Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*» գիրքը:



## Դասի ծրագրեր Ուսուցիչների համար

Այս դասերի ծրագրերը օգտագործելու վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս 4-րդ էջը՝ «Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը»:

## Դասընթացի վերանայում

1. Առաջին դասից մեկ կամ երկու օր առաջ դու կարող ես այս դասընթացը ներկայացնել ուսանողներին և նրանց տալ որոշ հանձնարարություններ առաջին դասի վերաբերյալ: Եթե հնարավոր է, այս դասընթացի ուսուցումը սկսելուց մեկ կամ երկու օր առաջ բաժանի՝ ը Ուսուցման ուղեցույցը:
2. Հաջորդ էջի վրա գետեղված է *Դասարանական աշխատանքի ցուցակը*, որտեղ գրված է, թե ո՞ր հանձնարարությունը է՝ ըբ պետք է ավարտված լինի: Դրանք պետք է լրացվեն համապատասխան ամսաթվերին՝ կիրառելով *Դասարանական աշխատանքի ցուցակի* դատարկ բլանկները, որոնք գտնվում են ուսանողների Ուսումնան ուղեցույցի վերջում:
3. Տեղյա՛կ պահիր քո ուսանողներին, որ նրանք պետք է լրացրած լինեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1.-ի՝ «*Ի՞նչ են վերաբերմունքները*» բաժինը՝ նախքան առաջին դասին գալը: Դու կարող ես նրանց համառոտ բացատրել Նախագիծ 2.-ի՝ «*Փոխել սեփական վերաբերմունքը*» բաժինը: Այս Նախագիծը չի ուսուցանվելու նախքան երկրորդ դասը սկսելը: Ասա՛ նրանց, որ չսկսեն Նախագիծ 2.-ը մինչև առաջին դասի ավարտվելը:  
 Ասա՛ նրանց, որ եթե չեն հասկանում, թե ինչ գրեն պատասխանների տեղերում, թող պարզապես բաց թողնեն այդ տեղերը բլանկի վրա: Նրանք կարող են լրացնել Նախագիծ 2.-ի այդ հատվածը կամ առաջին դասի ընթացքում, կամ դրանից հետո: Բայց և այնպես, կարիք չկա, որ նրանք լրացնեն Նախագիծ 2.-ի բոլոր երեք օրինակների առաջին երեք հարցերը՝ նախքան առաջին դասը:
4. Ուսանողի ձեռնարկը կարող է բաժանվել ուսանողներին դասընթացը ներկայացնելու և Ուսուցման ձեռնարկը բաժանելու ժամանակ: Եվ երբ դու դա անես, ուսանողներին ասա՛, որ լրացնեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1.-ը նախքան Ուսանողի ձեռնարկի Գլուխ 1.-ը կարդալը: Նախագիծ 1.-ի մի քանի հարցերի պատասխաններ գտնվում են Ուսանողի ձեռնարկի առաջին մեկ-երկու էջերում:
5. Երկու դասերն էլ, թե՛ 1.-ը, թե՛ 2.-ը, հնարավոր է բաժանել երկու մասերի: Եթե դու ուզում ես, կարող ես աչքի անցկացնել դասի ծրագիրը և մտածել, թե որ տարբերակը քո ուսանողների համար կլինի ամենալավը:

Քո վերաբերմունքը պետք է նման լինի Իմ վերաբերմունքին, քանի որ Ես, լինելով Մեսիան, չեկա ծառայություն ընդունելու, այլ ծառայելու, և Իմ կյանքը շատերի համար որպես փրկանք տալու:

**Հիսուս Քրիստոս**

**Մատթեոս 20:28**

## Դասարանական Հանձնարարության Ցուցակ

Դասընթացի անվանումը \_\_\_\_\_ Վերաբերմունքներ \_\_\_\_\_

Հարցաշար	Անգիր համարներ	Ամսաթիվ
1	_____ Առակաց 10:17 _____	_____ օր 2-րդ _____
2	_____ Գաղատացիներին 6:1 _____	_____ օր 3-րդ _____
3	_____ Աստվածաշնչյան վերաբերմունք ունենալ, երբ _____ _____ քեզ հանդիմանում են (Ուսանողի ձեռնարկ, էջ18) _____	_____ օր 3. կամ 4-րդ _____

Նախագծեր	Ամիս, ամսաթիվ
1	_____ օր 1-ին _____
2	_____ օր 2-րդ կամ 3-րդ _____
3	_____ օր 2-րդ _____
4	_____ օր 3-րդ կամ 4-րդ _____
5	_____ օր 4-րդ կամ 5-րդ _____
6	_____ օր 3-րդ _____
7	_____ օր 3-րդ _____
8	_____ օր 4-րդ _____
9	_____ օր 5-րդ – կամ ըստ ընտրության _____
10	_____ օր 5-րդ – կամ ըստ ընտրության _____ _____

Ստուգարք      Ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_ օր 5-րդ \_\_\_\_\_

## 1

**Դաս 1.****Ի՞նչ են վերաբերմունքները****1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ զարգացնել նոր վերաբերմունքներ իմ առօրյա կյանքում դրանք կիրառելու համար:

**2. Բանալի համար՝ Եփեսացիներին 4:23:**

Հիմա քո վերաբերմունքներն ու մտքերը պետք է մշտապես փոխվեն և ավելի լավը դառնան:

**3. Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի Գլուխ 1.-ը և 2.-ը համընթաց են այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1.-ի՝ «Ի՞նչ են վերաբերմունքները» բաժինը նույնպես համընթաց է այս դասի հետ:

**4. Երկու դասաժամերի հնարավորություն:**

Եթե քո ժամանակացույցը թույլ է տալիս, դու կարող ես որոշել և այս առաջին դասն անցկացնել երկու դասաժամերով: Այս դասի երկու հիմնական թեմաները կարող են անցկացվել առանձին-առանձին.

1) Ի՞նչ են վերաբերմունքները:

2) Ինչպե՞ս կարող է մարդը նոր վերաբերմունք զարգացնել:

**5. Դասի ջերմացում՝ վերաբերմունքի պրեզենտացիա (5-10 րոպե):**

Դասը սկսի՛ր տեսողական պրեզենտացիայով, որը ներկայացնում է վերաբերմունքների բազմազանությունը, որ մենք կարող ենք ունենալ տարբեր հարցերի վերաբերյալ: Այս պրեզենտացիայի հիմնական նպատակը նրանց հետաքրքրությունը գրգռելն է, որպեսզի ավելի մոտիկից դիտարկեն որոշ այնպիսի վերաբերմունքներ, որոնք ազդում են նրանց առօրյա վարվեցողության վրա:

Այս պրեզենտացիան դու կարող ես անել Power Point-ի միջոցով, կամ կարող ես տպել պատկերներ, որոնք ուզում ես ցույց տալ քո ուսանողներին:

Ներքևում գրված վերաբերմունքներից յուրաքանչյուրի համար տեսողական պատկե՛ր ստեղծիր: Ազա՛տ զգա քեզ, եթե ցանկություն ունենաս ավելացնել ուրիշ մտքեր էլ, որոնք կնկարագրեն աչքի ընկնող

վերաբերմունքները: Փորձի՛ր գտնել ներկայացվող վերաբերմունքին համապատասխան ոճ և այլ բաղկացուցիչներ:

Ահա մի քանի մտքեր, որոնք դու կարող ես կիրառել վերաբերմունքները ներկայացնելիս.

1. Կանոնները ստեղծվել են, որպեսզի խախտեն դրանք:
2. Առաջնորդներն ինչքան հզոր են դառնում, այնքան կոռումպացված են լինում:
3. Գողացված խնձորներն ամենաքաղցրն են:
4. Ամենակարևորը խաղում հաղթելն է:
5. Իրական երջանկությունը փողով է գնվում:
6. Մերը կարող է լուծել աշխարհի բոլոր խնդիրները:
7. Քաղաքականությունը ձանձրալի է:
8. Մենք նախապաշարված չենք, մենք բոլորին ենք ասում:
9. Շիկահերների բախտը միշտ բերում է:
10. Առատաձեռն մարդիկ սովորաբար հարստանում են:
11. Ինչո՞ւ աշխատել, եթե կարող ես լավ ապրել:
12. Եթե դու մի բան կարող ես անել, ես քեզնից լավ կանեմ դա:
13. Ծախսի՛ր քո ցանկությունների համար, մուրա՛կ կարիքներիդ համար:

Այս տեսողական պրեզենտացիան քո ուսանողներին ներկայացրո՛ւ համառոտ մեկնաբանությամբ այն տարբեր վերաբերմունքների շուրջ, որոնք մարդիկ ունեն այսօր: Ասա՛ նրանց, որ մտածեն այս պրեզենտացիայի յուրաքանչյուր պատկերի և մտքի հետևում գտնվող վերաբերմունքների մասին:

Պրեզենտացիան ներկայացնելիս ժամանակ մի՛ հատկացրու յուրաքանչյուրն առանձին-առանձին քննարկելու համար: Մեր նպատակն է՝ պարզապես գրգռել նրանց հետաքրքրությունը վերաբերմունքներն ուսումնասիրելու համար: Պրեզենտացիայի վերջում միանգամից անցի՛ր այս դասի հաջորդ կետի քննարկմանը՝ *Ի՞նչ են վերաբերմունքները:*

## 6. Անցկացրո՛ւ Ա. կետը՝ «Ի՞նչ են վերաբերմունքները» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 5-րդ էջեր և Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1:

Ուսանողների հետ քննարկե՛ք «վերաբերմունք» բառի տարբեր սահմանումները: Թող ուսանողները կարդան Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1.-ի՝ «*Ի՞նչ է վերաբերմունքը:*» բաժնի հարցերին տրված իրենց պատասխանները: Գրի՛ր նրանց պատասխանները գրատախտակի կամ

## 1

պրոյեկտորի վրա: Քննարկման այս հատվածում ընդունի՛ր նրանց պատասխանները, եթե անգամ դրանք ամեննին ճիշտ չեն:

Նրանց բոլոր կարծիքները լսելուց հետո բացատրի՛ր, թե ինչ սահմանումներ ենք մենք կիրառելու վերոնշյալ բառի համար սույն դասի ընթացքում քննարկման ժամանակ: Թող նրանք դիմեն Ուսանողի ձեռնարկի 5-րդ էջերի վրա գտնվող սահմանումների ցանկին:

### Ի՞նչ են վերաբերմունքները.

1. մտածելակերպ,
2. կարծիք,
3. մտածելու պատկեր,
4. մտածելու սովորություն,
5. տեսակետ,
6. մտքեր, որ ես սովորել եմ,
7. մտային դիրք ինչ-որ փաստի կամ իրավիճակի վերաբերյալ:  
(*Webster's Seventh New Collegiate Dictionary*)

*Մեջբերումն արված է Վերաբերմունքներ, Ուսանողի ձեռնարկ, էջ 5-րդ*

### 7. Վերաբերմունքների և զգացումների միջև եղած տարբերությունը (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 5-րդ:

Համոզվե՛ք, որ ուսանողները հասկանում են *վերաբերմունքների* և *զգացումների* միջև եղած տարբերությունը: Թող նրանք կարդան իրենց պատասխանները, որ տվել են Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 1., հարց 2.-ին: Հարցը պահանջում է բացատրել *վերաբերմունքների* և *զգացումների* միջև եղած տարբերությունը: Այս թեման քննարկվում է նաև Ուսանողի ձեռնարկ, էջ 5-րդում:

### 8. Վերաբերմունքներ և վատ վերաբերմունքներ (3-5 րոպե):

Որոշ ուսանողներ ինչ-որ մեկին դիմելիս, հնարավոր է, «վերաբերմունք» բառն այսպես կիրառեն. «Այս ի՛նչ վերաբերմունք է»: Մա ասելով նրանք իրականում նկատի ունեն, որ «Նա վատ վերաբերմունք ունի»: Հստակեցրո՛ւ, որ այս դասընթացի ժամանակ մենք *վերաբերմունք* բառն այդ կերպ չենք գործածելու: Մենք բոլորս էլ ունենք վերաբերմունքներ: Դրանցից որոշները





լավն են, որոշները՝ վատ: Քո ուսանողների համար հղում կատարիր այն օրինակին, որ տրված է Ուսանողի ձեռնարկ, էջ 5-րդում:

**9. Ի՞նչ է ասում Փիլիպպեցիներին 2:1-11-ը վերաբերմունքների մասին (4-6 թույլ), Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1.:**

Թող ուսանողները կարդան իրենց պատասխանները Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1., հարց 3-րդին: (*Ի՞նչ է այս հատվածը քեզ ասում վերաբերմունքի մասին:*) Շեշտի՛ր այն միտքը, որ մենք պետք է ունենանք նույն վերաբերմունքները (հայերեն թարգմանության մեջ՝ միտքը, թարգմ. խմբ.), ինչ որ Քրիստոսն ուներ. տե՛ս Փիլիպպեցիներին 2:5-ը:

**10. Քննարկե՛ք Հռոմեացիներին 12:2-ը վերաբերմունքների վերաբերյալ (4-6 թույլ):**

Թող ուսանողները գտնեն և կարդան Հռոմեացիներին 12:2-ը տարբեր թարգմանություններով, նաև ժամանակակից թարգմանությամբ: Համառոտ քննարկե՛ք, թե ինչ է ասում այս համարը նորադարձ քրիստոնյաների վերաբերմունքների մասին:

**11. «Հանել և հազնել» վարժություն փոքր խմբերով (15-25 թույլ):**

Այս վարժության համար դասարանը բաժանե՛ք 4-5 հոգանոց խմբերի: Եթե դասարանը փոքրաթիվ է, ապա՝ 2 խմբի:

ա) Ներկայացրո՛ւ վարժությունը՝ բացատրելով, որ Աստված Սուրբ Գրքում մեզ ասում է՝ **հանել** մեր վրայից վերաբերմունքների և վարվեցողության որոշ տեսակներ: Աստված նաև պատվիրում է՝ **հազնել** մեր վրա վերաբերմունքների և վարվեցողության այլ տեսակներ:

բ) Հանձնարարի՛ր մեկ (կամ ավելի) խմբին կարդալ Կողոսացիներին 3:5-15-ը: Մյուս խմբին (խմբերին) հանձնարարի՛ր Եփեսացիներին 4:17-32-ը:

գ) Յուրաքանչյուր խումբ թող երկու ցուցակ կազմի.

Ցուցակ 1.՝ Ի՛նչ պետք է **հանել** կամ ինչի՛ց ազատվել:

Ցուցակ 2.՝ Ի՛նչ պետք է **հազնել** կամ ի՛նչ զարգացնել մեր կյանքում:

Նրանց տո՛ւր երկու մեծ թղթեր (ստվարաթղթեր) և ֆլումաստերներ: Թող նրանք իրենց ցուցակները գրեն այդ թղթերի վրա (այս նախագիծն ավարտելու համար նրանց տո՛ւր 8-12 թույլ):

դ) Ցուցակներն ավարտելուց հետո դրանք փակցրո՛ւ դասարանի դիմացի մասում: Յուրաքանչյուր խմբից մի հոգի թող ներկայացնի իր նշումները դասարանի առաջ (5-10 թույլ):

## 1

12. Անցկացրո՛ւ Ուսանողի ձեռնարկ, Գլուխ 2.-ի Ա. կետը՝ «Իմ կյանքի ո՞ր ասպարեզներում ես կարիք ունեմ նոր վերաբերմունքներ զարգացնելու» (5-10 բույե), Ուսանողի ձեռնարկ, 8-9-րդ էջեր:

Այսօրվա դասի ծրագրի մնացած հատվածը վերաբերում է այն հարցերին, որ բարձրացված են Ուսանողի ձեռնարկ, Գլուխ 2.-ում:

Եթե ժամանակ ունեք, կարող եք քննարկել Ուսուցման ուղեցույց Նախագիծ 1.-ի 4-րդ և 5-րդ հարցերը: Սակայն եթե ժամանակ չունեք, թողե՛ք սա և միանգամից անցե՛ք Նախագիծ 1.-ի 6-րդ հարցին:

4) *Ինչպե՞ս ես դու բնավորություն ձեռք բերում:*

*Ինչպե՞ս ես դու բնավորություն ձևավորում կամ կազմավորում:*

5) *Ինչպե՞ս ես դու օգտագործում քո վերաբերմունքը քո ամենօրյա կյանքում:*

6) *Քո կյանքի ո՞ր ասպարեզներում ես դու ցանկանում նոր վերաբերմունքներ զարգացնել:*

Թող ուսանողները կողմնորոշվեն, թե նորադարձ քրիստոնյայի համար որ վերաբերմունքներն են ամենակարևորը, որ փոխվեն: Թող նրանք օգտագործեն Եփեսացիներին 4:17-32 և Կողոսացիներին 3:5-15 հատվածները: Նրանք կարող են օգտագործել նաև Նախագիծ 1.-ի 6-րդ հարցին տված իրենց պատասխանները: Եթե ուզում ես, կարող ես մի քանի ուսանողների թույլ տալ, որ բացատրեն, թե ինչու են տվյալ վերաբերմունքները (որոնք նրանք առանձնացրել են) այդքան կարևոր նորադարձ քրիստոնյայի համար:

13. Երկու վերաբերմունքներ հանդիմանելու մասին:

Երբ որ ուսանողներն արտահայտվեն, թե որ վերաբերմունքներն են կարևոր, որ նորադարձ քրիստոնյաները զարգացնեն, ավելացրո՛ւ հետևյալ երկու վերաբերմունքները, եթե դրանք ցուցակի մեջ չկան:

1. Իմ վերաբերմունքը, երբ ինձ հանդիմանում են (կամ քննադատում):
2. Իմ վերաբերմունքը, երբ ես հանդիմանում եմ մեկին, ով, իմ կարծիքով, ինչ-որ բան սխալ է արել:

Բացատրի՛ր նրանց, որ մենք այս վերաբերմունքներից յուրաքանչյուրի համար մեկ առանձին դաս կանցնենք: Եթե ուզում ես, կարող ես ուսանողներին ասել, որ անդրադառնան վերաբերմունքների ցանկին, որը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 9-րդ էջում՝ Ա.՝ «Իմ կյանքի ո՞ր ասպարեզներում ես կարիք ունեմ նոր վերաբերմունքներ զարգացնելու» կետի ներքևում:



**14. Անցկացրո՛ւ Բ. կետը՝ «Որտեղի՞ց ես պետք է սկսեմ նոր վերաբերմունքներ զարգացնել» (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 8-11-րդ էջեր:**

Այս դասի մնացած հատվածում մենք մեր ուշադրությունը կկենտրոնացնենք այն բանի վրա, թե ինչպես կարող ենք փոխել մեր վերաբերմունքները: Համեմատաբար համառոտ քննարկե՛ք Ուսանողի ձեռնարկի 9-11-րդ էջերում Գլուխ 2., Բ. կետը՝ *«Որտեղի՞ց ես պետք է սկսեմ նոր վերաբերմունքներ զարգացնել»*: Ցանկության դեպքում դու կարող ես օգտագործել Ուսանողի ձեռնարկում տրված 5 մտքերի օրինակն այս դասի վերաբերյալ (վերաբերմունք աշխատանքի հանդեպ):

**15. Անցկացրո՛ւ Գ. կետը՝ «Ի՞նչ մեթոդներ ինձ կօգնեն նոր վերաբերմունքներ զարգացնելու հարցում» (15-25 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 11-16-րդ էջեր:**

Բավականաչափ ժամանակ հատկացրեք քննարկելու Գ. կետը՝ *«Ի՞նչ մեթոդներ ինձ կօգնեն նոր վերաբերմունքներ զարգացնելու հարցում»*: Փորձի՛ր մի քանի օրինակներ բերել Ուսանողի ձեռնարկում ներկայացված չորս մեթոդներից յուրաքանչյուրի համար:

**16. Անձնական կիրառություն (10-20 րոպե):**

Թող ուսանողները բացեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2.՝ *«Փոխել սեփական վերաբերմունքը»* բաժինն իրենց Ուսուցման ուղեցույցներում:

Ա. Թող ամեն մի ուսանող անմիջապես պատասխանի 1-5 հարցերին: 3-րդ հարցը. *«Որտե՞նք են այն երկու տարբեր կետերը, որտեղ մենք կարող ենք սկսել փոխել մեր վերաբերմունքները»*, հիմնված է Ուսանողի ձեռնարկ, 6-7-րդ էջերում զետեղված՝ Գ. *«Ինչպե՞ս եմ ես վերաբերմունքներ ձեռք բերում»* բաժնի նյութերի վրա: Այնտեղ կա առնվազն 4 հնարավոր պատասխանների ցուցակ:

Բ. Այնուհետև ուսանողները թող բաժանվեն զույգերի (կամ 3 հոգանոց խմբերի) և բաժնեկցեն իրենց պատասխանները Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2.-ում գտնվող՝ *«Աստվածաշնչան ո՞ր համարն ամենաօգտակարը եղավ քեզ համար»*: Բաժնի 4-րդ հարցին: Թող նրանք մեկը մյուսին բացատրեն, թե ինչո՞ւ է այդ համարն օգտակար նրանց համար:

Գ. Ցանկության դեպքում, ուսանողները կարող են կիսվել իրենց պատասխաններով՝ *«Քո կյանքի ո՞ր վերաբերմունքը դու կուզենայիր փոխել»*: Բաժնի 5-րդ հարցի վերաբերյալ:

Դ. Դրանից հետո ուսանողները թող աղոթեն իրենց զրուցակցի համար՝ խնդրելով Աստծո օգնությունը, որպեսզի նրա վերաբերմունքները փոխվեն:

## 1

- Ե. Եթե ժամանակը բավարար է, խնդրի՛ր ուսանողներին՝ նախքան դասարանից դուրս գալը պատասխանել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2.-ի 6-րդ հարցին: *(«Գրի՛ր մեկ բան, որը դու կարող ես անել հաջորդ 24 ժամվա ընթացքում քո այս վերաբերմունքը փոխելու համար:»)*

## 17. Հանձնարարություններ:

- Ա. Բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկը, եթե դեռ չես բաժանել: Եթե դու հետևում ես այս դասընթացն ընդամենը 4 դասով ուսուցանելու ծրագրին, հանձնարարի՛ր քո ուսանողներին՝ կարդալ Ուսանողի ձեռնարկ, Գլուխ 3-ը՝ հաջորդ դասին պատրաստվելու համար: Եթե այս՝ Ուսուցչի դասի ծրագիր 1-ը բաժանել ես երկու դասերի, դու կարող ես քո ուսանողներին հանձնարարել՝ նորից կարդալ Ուսանողի ձեռնարկի 1-ին և 2-րդ գլուխները:
- Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1.-ի՝ *«Ի՞նչ են վերաբերմունքները»* բաժնի համար:
- Գ. Եթե դու հետևում ես այս դասընթացը 4 դասով անցկացնելու ծրագրին, հիշեցրո՛ւ ուսանողներին, որ Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 3.-ի՝ *«Իմ անցած փորձառությունը, երբ ինձ հանդիմանել են կամ քննադատել»* բաժինը պետք է լրացնեն մինչև *Վերաբերմունքների* հաջորդ դասը:

## 18. Դասի գնահատում:

- Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:  
 Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:  
 Ո՞ր մասերն էին ուսանողների համար ամենադժվար հասկանալի:  
 Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

## Դաս 2.

### Հանդիմանություն ստանալ կամ քննադատվել

#### 1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես կարիք ունեմ աստվածաշնչյան վերաբերմունք անգիր անելու և կիրառելու, երբ ինձ հանդիմանեն:

#### 2. Բանալի համար՝ Առակաց 10:17:

Հանդիմանություն ընդունողները կյանքի ճանապարհին են, բայց հանդիմանություն մերժողը մոլորվում է:

#### 3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համընթաց է այս դասին: Ուսուցման ուղեցույցի հետևյալ նախագծերը նույնպես համընթաց են այս դասին.

Նախագիծ 3. «Իմ անցած փորձառությունը, երբ ինձ հանդիմանել են կամ քննադատել»:

Նախագիծ 4. «Երկրորդ հայացք անցյալի հանդիմանություններին և քննադատություններին»:

Նախագիծ 5. «Օգտագործել իմ նոր վերաբերմունքը, երբ ինչ-որ մեկը հանդիմանում է ինձ»:

#### 4. Դասի ջերմացում՝ «Միավո՛ր տուր քննադատության համար» (5 րոպե):

Քո կյանքից մի պատմություն՝ ան պատմիր, երբ ինչ-որ մեկը քեզ հանդիմանել է կամ քննադատել: Չմոռանաս նաև պատմել, թե ինչպես արձագանքեցիր այդ հանդիմանությանը կամ քննադատությանը: Հետո ուսանողներին խնդրի՛ր՝ գնահատական դնել պատմության հետևյալ հատվածների համար:

- 1) Գնահատե՛ք, թե որքան լուրջ էր այն մարդու մեղքը, սխալը կամ բացթողումը, ում հանդիմանել կամ քննադատել էին: Օգտագործի՛ր 1-ից 10 միավորանոց սանդղակ, որտեղ 1-ը ներկայացնում է շատ փոքր խնդիր, իսկ 10-ը՝ շատ լուրջ:
- 2) Գնահատե՛ք, թե որքանով էր լավ արված հանդիմանությունը կամ քննադատությունը: Կիրառե՛ք 1-10 միավորանոց սանդղակ, որտեղ 1-ը նշանակում է, որ հանդիմանողը կամ քննադատողը շատ վատ է կատարել իր գործը տվյալ անձնավորությանը քննադատելիս, իսկ 10-ը նշանակում է, որ հանդիմանողը գերազանց (բարությանբ, զգուշությամբ և նրբանկատությամբ) է կատարել իր գործը՝ դիմացիներին հանդիմանելիս:

## 2

- 3) Գնահատե՛ք, թե ձեր կարծիքով, որքան լավ էր տվյալ անձնավորությունը պատասխանել հանդիմանությանը կամ քննադատությանը: Այդ անձնավորությանը տվե՛ք 1-10 միավոր: Տվե՛ք նրան 1 միավոր, եթե դուք կարծում եք, որ նա շատ վատ է արձագանքել հանդիմանությանը կամ քննադատությանը, և 10 միավոր, եթե նա այդ իրավիճակում իրեն պահել է գերազանց և հասուն կերպով:

Այս վարժությունը պարզապես զվարճանալու համար է և նախատեսված է սրելու նրանց հետաքրքրությունն այն հարցերի հանդեպ, որ այսօր մենք ուզում ենք անցնել դասի ընթացքում: Այս հատվածում խուսափի՛ր ցանկացած երկար քննարկումից: Դու ազատ կարող ես նորից վերադառնալ այս օրինակին սույն դասի ընթացքում:

## 5. Երկու դասաժամով տարբերակ:

Այս դասին համարժեք շատ ինֆորմացիա կա: Ընդարձակ քննարկման հավանականությունը կարող է քեզ քաջալերել, որպեսզի այն ծրագրավորես անցնել մեկի փոխարեն երկու դասաժամով:

## 6. Դասի սկզբում համառոտ նշի՛ր, թե ինչպես է սույն դասն առնչվում «Դաս երեքի» հետ:

Ուսանողներին ասա՛, որ «Ինչպես հանդիմանել ինչ-որ մեկին» թեմայի շուրջ իրենց հարցերն ու մեկնաբանությունները պահեն մինչև Դաս 3-րդը: Այսօր մենք միայն քննարկելու ենք, թե ինչպիսին պետք է լինի իմ վերաբերմունքը, երբ ինձ հանդիմանում են: Նաև նշի՛ր, որ այս նույն վերաբերմունքը կարող է և պետք է կիրառվի, երբ ինձ քննադատում են:

## 7. Կիսվի՛ր հանդիմանություն ստանալու կամ քննադատվելու քո սեփական օրինակով (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 17, Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3.:

Դու կարող ես մի քանի ուսանողների առիթ տալ՝ դասարանի առաջ նկարագրելու այն օրինակներից մեկը, որ նրանք գրել են ըստ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3.-ի՝ «Իմ անցած փորձառությունը, երբ ինձ հանդիմանել են կամ քննադատել» բաժնի համար: Փորձի՛ր խուսափել մանրամասն քննարկումից, թե ով էր ճիշտ կամ սխալ: Թող նրանք ներկայացնեն իրենց օրինակներն ու մեկնաբանեն, թե ինչքանով է այն համապատասխանում այսօրվա քննարկման թեմային:

Եթե ուսանողները չցանկանան կիսվել իրենց օրինակներով, օրինակ՝ կբեր քո կամ նախկին ուսանողներից մեկի կյանքից: Ցանկության դեպքում դու կարող ես համառոտ ներկայացնել Գլուխ 3.-ի Ա. կետի՝ «Ինչո՞ւ են մարդիկ ինձ նեղացնում» բաժնի որոշ մտքեր: Տե՛ս Ուսանողի ձեռնարկ, էջ 17-րդ:

## 8. Դավթի մեղքը Բերսաբեի հետ (5-15 բույե):

Կիրառի՛ր Նաթանի՝ Դավիթ թագավորին հանդիմանելու պատմությունը, որը վերաբերում էր նրա մեղքին՝ կապված Բերսաբեի և Ուրիայի հետ Բ Թագավորաց 11:1-12:25 հատվածում: Սա աստվածաշնչյան հստակ օրինակ է մի անձնավորության մասին, ով ճիշտ արձագանքեց, երբ իրեն հանդիմանեցին: Դու կարող ես ուսանողներից մեկին հանձնարարել, որ ի մի բերի այդ պատմությունը դասարանի համար: Հատուկ ուշադրություն և դարձրեք Բ Թագավորաց 12:1-14 հատվածին, որտեղ գրանցված է Նաթանի և Դավթի միջև կայացած զրույցը: Քննարկե՛ք Դավթի արձագանքը, երբ Նաթանը մատնացույց արեց նրա մեղքը: Դուք կարող եք նաև կարդալ Սաղմոս 51-ը, որը գրվել է այն բանից հետո, երբ Նաթանը եկավ Դավթի մոտ:

Հնարավոր է՝ ավելի արդյունավետ լինի աստվածաշնչյան այս պատմության վերաբերյալ դասարանում համառոտ խոսելը: Որից հետո միայն թող ուսանողները կարդան Բ Թագավորաց 11, 12 գլուխները և Սաղմոս 51-ը՝ նախքան հաջորդ դասը: Սաղմոս 51-ը գերազանց օրինակ է՝ ցույց տալու համար Դավթի վերաբերմունքը, երբ նրան հանդիմանեցին: Դու կարող ես նաև նրանց առիթ տալ, որպեսզի նկարագրեն այն ծրագիրը, որը Նաթանն օգտագործեց Դավթին հանդիմանելու համար: Սա կարող է կիրառվել Դաս երեքում, երբ մենք կքննարկենք, թե ինչպես պետք է հանդիմանել մարդկանց:

## 9. Աստվածաշնչյան օրինակներ, երբ մարդիկ սխալ արձագանքեցին հանդիմանությանը (5-10 բույե):

Դու կարող ես նաև նշել, որ Աստվածաշնչում կան շատ օրինակներ, երբ մարդիկ սխալ արձագանքեցին՝ սխալ վերաբերմունք ցույց տալով:

- 1) Ադամն ու Եվան: Նրանք պատասխանատվություն չվերցրին Եդեմի պարտեզում իրենց մեղքի համար: Ծննդոց 3:8-13
- 2) Կայենը: Նա մերժեց Աստծո հանդիմանությունն իր զոհաբերության վերաբերյալ: Ծննդոց 4:1-12
- 3) Հերովդեսը: Նա չհետևեց Հովհաննես Մկրտչի հանդիմանությանը, որը վերաբերում էր Հերովդիայի հետ նրա ամուսնությանը: Մատթեոս 14:1-12
- 4) Հարուստ երիտասարդը: Նա չցանկացավ թողնել իր հարստությունը: Մատթեոս 19:16-24
- 5) Սաղուկեցիներն ու փարիսեցիները: Նրանք մերժեցին Հիսուսի հանդիմանությունը: Մատթեոս 12:9-14

10. Անցկացրո՛ւ Բ. կետը՝ «Աստվածաշնչյան ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ունենալ, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում» (5-10 բույսեր), Ուսանողի ձեռնարկ, 18-29-րդ և 34-35-րդ էջեր:

Կրկին վերանայե՛ք վերաբերմունքի սահմանումը (Ուսանողի ձեռնարկ, 5-րդ էջ): Բացատրի՛ր, որ վերաբերմունքը մեր մտածելակերպն է: Մտքերի այդ ցանկը մեզ կօգնի որոշելու, թե ինչպես պետք է արձագանքենք տվյալ իրավիճակում:

Ներկայացրո՛ւ աստվածաշնչյան այն նոր վերաբերմունքը, որը պետք է կիրառենք, երբ մեզ հանդիմանում են: Տե՛ս Ուսանողի ձեռնարկ, Բ. կետ, 18-29-րդ էջեր: Արագ անդրադարձի՛ր մտքերից յուրաքանչյուրին, որոնք ձևավորում են նոր կիրառվելիք վերաբերմունքը, երբ մեզ հանդիմանում են կամ քննադատում: Թող ուսանողները հղում անեն Ուսանողի ձեռնարկ, էջ 18-ում գտնվող մտքերին կամ 34-35-րդ էջերում գտնվող աղյուսակի սյունակներից մեկին:

Այնուհետև թող ուսանողները կարդան և քննարկեն աստվածաշնչյան համարներ, որոնք համընթաց են այդ մտքերից յուրաքանչյուրին: Ուսանողի ձեռնարկում դրանք գրված են 18-րդ էջում և 34-35-րդ էջերի աղյուսակի 6-րդ սյունակում:

**Աստվածաշնչյան վերաբերմունք ունենալ, երբ քեզ հանդիմանում են:**

1. Երբ ինձ հանդիմանում են (կամ քննադատում): Առակաց 10:17
2. Ես ուշադիր կլսեմ: Հակոբոս 1:19
3. Ես շնորհակալ եմ, որ նա ինձ հանդիմանում է:  
Ա Թեսաղոնիկեցիներին 5:18
4. Ես սխալ էի: Առակաց 28:13
5. Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա:  
Առակաց 15:31-32

*Մեջբերումն արված է Վերաբերմունքներ, Ուսանողի ձեռնարկ, էջ 18-ից:*

Ցանկության դեպքում դուք կարող եք աղյուսակի ավելի մեծ տարբերակ ստեղծել, որը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 34-35 էջերում: Կախի՛ր պատի վրա այս աղյուսակը, որին դու կարող ես հեշտությամբ հղում անել տվյալ դասի, ինչպես նաև ողջ դասընթացի ընթացքում (բացի Վերաբերմունքներ թեմայի ստուգարքի ժամանակը):

Այս ժամանակահատվածում մի՛ ներկայացրու նշված աղյուսակի վերաբերյալ մնացած տեղեկությունը, որը սույն վերաբերմունքի հետ համընթաց է Ուսանողի ձեռնարկի 34-35-րդ էջերի նյութերին:



**11. Օրինակներով ներկայացրո՛ւ այս նոր վերաբերմունքը (5-10 բույե):**

Բե՛ր երկու կամ երեք օրինակներ, թե ինչպես են մարդիկ կիրառել այս վերաբերմունքը և ինչ է տեղի ունեցել: Բե՛ր օրինակներ քո կամ նախկին ուսանողների կյանքից, ովքեր լրացրել են Ուսուցման ձեռնարկ, Նախագիծ 5.-ի՝ *«Օգտագործել իմ նոր վերաբերմունքը, երբ ինչ-որ մեկը հանդիմանում է ինձ»* բաժնում:

Փորձի՛ր ցույց տալ, թե ինչպես է յուրաքանչյուր քայլ կիրառվել կամ չի կիրառվել, և այս վերաբերմունքը կիրառելու արդյունքները: Ցանկության դեպքում դու կարող ես նաև հղում անել, թե ինչպես Նաթանը հանդիմանեց Դավիթ թագավորին, և թե ինչպես Դավիթն արձագանքեց այդ հանդիմանությանը: Տե՛ս Բ Թագավորաց 11:1-12:25:

**12. Պատկերավոր ձևով ներկայացրո՛ւ հանդիմանություն ստանալու մասին անցյալի փորձառությունը (5-10 բույե):**

Մեծ մասամբ քո ուսանողները պետք է հստակ օրինակներ ունենան Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3.-ում, երբ նրանց հանդիմանել են կամ քննադատել: Հավանական է, որ նրանցից շատերը կհամաձայնվեն, որ այս աստվածաշնչյան վերաբերմունքով չեն արձագանքել, երբ հայտնվել են նման իրավիճակում:

Նախագիծ 3.-ի օրինակներն օգտագործելիս թող ուսանողները պատկերացնեն, թե ինչ կլիներ, եթե նրանք կիրառած լինեին աստվածաշնչյան այս վերաբերմունքը, երբ նրանց հանդիմանել էին: Թող երկու կամ երեք ուսանողներ կիսվեն իրենց օրինակներով:

Եթե ուզում ես, կարող ես քննարկման այս հատվածը սկսել քո կյանքից օրինակ բերելով: Մա կարող է վստահության մթնոլորտ ստեղծել և ավելի հեշտությամբ նրանց հասկացնել, թե դու ինչ ես ուզում այդ հատվածում:

**13. Անցկացրո՛ւ Գ. կետը՝ «Որո՞նք են աստվածաշնչյան վերաբերմունք օգտագործելու օգուտները, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում» (5-10 բույե), Ուսանողի ձեռնարկ, էջ 29:**

Թող ուսանողները գրեն, թե նրանց կարծիքով ի՛նչ օգուտներ կարող են լինել այս նոր վերաբերմունքը կիրառելիս:

Նրանց կարծիքները լսելուց հետո դու կարող ես ասել, որ լրացուցիչ մտքերի համար անդրադառնան Ուսանողի ձեռնարկ, էջ 29, Գ. կետին՝ *«Որո՞նք են աստվածաշնչյան վերաբերմունք օգտագործելու օգուտները, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում»:*

Մատնանշի՛ր, որ մեր վարքն է բնորոշում, թե ինչպիսին է մեր վերաբերմունքը: Դու չես կարող աստվածաշնչյան վարք դրսևորել

հանդիմանություն ստանալիս, եթե չունենաս աստվածաշնչյան վերաբերմունք:

2

**14. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Այս վերաբերմունքի հետ կապված ի՞նչ խնդիրներ կան» (5-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 30-33-րդ էջեր:**

Քո ուսանողների համար, հավանաբար, ավելի հեշտ կլինի գրել մի շարք խնդիրների մասին, որոնց կարող են հանդիպել, եթե հանդիմանություն ստանալու կամ քննադատվելու ժամանակ փորձեն կիրառել աստվածաշնչյան այս նոր վերաբերմունքը:

Թող նրանք այս վերաբերմունքի հետ կապ ունեցող խնդիրների մի ցուցակ կազմեն: Գրի՛ր նրանց կարծիքները գրատախտակի, պրոյեկտորի կամ մեծ թղթերի վրա: Թող նրանք գրեն պատճառաբանություններն այն առումով, թե ինչու այս աստվածաշնչյան վերաբերմունքը կարող է չգործել:

Նրանց կարծիքներն ընդունելուց հետո ստուգի՛ր այն ցանկը, որը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 30-33-րդ էջերում, որպեսզի տեսնես, թե կարի՞ք կա՞ արդյոք ուրիշ խնդիրներ էլ ավելացնել նրանց ցանկում:

Հարկադրված մի զգա քեզ՝ արդարացնելու համար այս աստվածաշնչյան վերաբերմունքն ընդդեմ այն բոլոր խնդիրների, որ նրանք կթվարկեն:

Թույլ մի՛ տուր, որ դասաժամի այս հատվածը ճահճանա չափից ավելի բացասական մեկնաբանությունների պատճառով: Մատնանշի՛ր, որ այս խնդիրները չեն նշանակում, որ անհնար է նման վերաբերմունք զարգացնելը: Խնդիրները պարզապես ցույց են տալիս, որ մարտահրավերը մեծ է լինելու նրանց համար, ովքեր լրջորեն ուզում են աստվածաշնչյան վերաբերմունք զարգացնել, որպեսզի կիրառեն այն դեպքերում, երբ իրենց հանդիմանում են:

**15. Անցկացրո՛ւ Ե. կետը՝ «Ինչպե՞ս ես սկսեմ զարգացնել այս վերաբերմունքը» (10-20 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 33:**

Ուսանողներին ներկայացրո՛ւ մի քանի տարբեր քայլեր, որոնք նրանք կարող են օգտագործել աստվածաշնչյան այս վերաբերմունքն իրենց կյանքում զարգացնելու համար: Կիրառի՛ր Ուսանողի ձեռնարկի 33-րդ էջի նյութերն այս հատվածում: Հղո՛ւմ արա Ուսանողի ձեռնարկի Գլուխ 2.-ին, որտեղ տրված են այս վերաբերմունքի զարգացմանն ուղղված մի քանի քայլեր:

**16. Քննարկե՛ք Ուսանողի ձեռնարկի 34-35-րդ էջերի վրա գտնվող աղյուսակը (5-15 բալլե):**

Այս հատվածում կարող ես քննարկել նշված վերաբերմունքին առնչվող մեծ աղյուսակը, որը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 34-35-րդ էջերում: Քննարկումը կենտրոնացրո՛ւ չորրորդ և հինգերորդ սյունակների վրա, որոնք վերնագրված են՝ *«Ի՞նչ պետք է ես ասեմ»* և *«Ի՞նչ պետք է ես անեմ»*:

Բացատրի՛ր, որ *«Ներքին դրական որակ»* սյունակը մի մասն է բնավորության ձևավորման մեծ շղթայի, որն օգնում է նոր վերաբերմունքի զարգացմանը:

**17. Ուշադրություն՝ ն դարձրու Տարբերակ 1-ին Դաս 4-րդի համար:**

Հնարավոր է՝ դու բավարար ժամանակ չունենաս, որպեսզի մեկ դասաժամի մեջ անցկացնես այս դասի համար տրված բոլոր կարծիքները: Դու կարող ես սպասել և դրանցից որոշներն անցնել Դաս 4-րդում (տե՛ս Տարբերակ 1-ինի համար ցուցումները, որոնք գտնվում են Դաս 4-րդի համար Ուսուցչի դասի ծրագրի մեջ: (Ուսուցչի ձեռնարկ, 41-46-րդ էջեր):

Եթե դու որոշես Դաս 4-րդի համար օգտագործել Տարբերակ 1-ինը, համոզվի՛ր, որ կարող ես այսօր անցկացնել Ե. կետը՝ *« Ինչպե՞ս ես սկսեմ զարգացնել այս վերաբերմունքը »*: (Ուսանողի ձեռնարկ, էջ 33)

**18. Անձնական կիրառություն:**

Այսօր անձնական կիրառությունը, որը պետք է օգտագործվի հանդիմանություն ստանալու կամ քննադատվելու ժամանակ, կենտրոնացրո՛ւ այս նոր վերաբերմունքը զարգացնելու վրա:

Ա. Բացատրի՛ր, որ հաջորդ դասին նրանք ունենալու են հարցաշար այն հինգ մտքերի վերաբերյալ, որոնք ձևավորում են աստվածաշնչյան վերաբերմունքը, որը պետք է կիրառենք հանդիմանություն ստանալու կամ քննադատվելու ժամանակ:

Բ. Քաջալերի՛ր նրանց, որպեսզի սկսեն համարներ անգիր անել յուրաքանչյուր մտքի համար, որոնք զուգահեռ են այս վերաբերմունքի հետ:

Գ. Բացատրի՛ր, որ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4.-ի՝ *«Երկրորդ հայացք անցյալի հանդիմանություններին և քննադատություններին»* բաժինը նրանց համար մեկ այլ ճանապարհ է՝ ուղղված այս վերաբերմունքը զարգացնելուն:

Դ. Քաջալերի՛ր նրանց, որպեսզի բացատրեն իրենց առաջնորդներին ու ընտանիքի անդամներին այն ամենը, ինչ սովորել են այս դասի ժամանակ: Քաջալերի՛ր նրանց, որ աստվածաշնչյան այս նոր վերաբերմունքը զարգացնելիս դիմեն նրանց օգնությանը:

## 19. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջին հատվածում տո՛ւր հարցաշար Առակաց 10:17-ի վերաբերյալ:

**Առակաց 10:17.**

**«Հանդիմանություն ընդունողները կյանքի ճանապարհին են, բայց հանդիմանություն մերժողը մոլորվում է»:**

- Բ. Բացատրի՛ր, թե ինչպես է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4.-ի՝ *«Երկրորդ հայացք անցյալի հանդիմանություններին և քննադատություններին»* բաժինը համընթաց գնում Նախագիծ 3.-ի՝ *«Իմ անցած փորձառությունը, երբ ինձ հանդիմանել են կամ քննադատել»* բաժնում նրանց արած աշխատանքի հետ: Նախագիծ 4.-ը պետք է լրացվի նախքան Դաս 4-րդը:
- Գ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2.-ի համար այսօր կամ հաջորդ դասից հետո:

## 20. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար ամենադժվար հասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

## Դաս 3.

### Հանդիմանել մարդկանց

#### 1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես կարիք ունեմ աստվածաշնչյան վերաբերմունք անգիր անելու և կիրառելու, երբ հանդիմանում եմ ուրիշներին:

#### 2. Բանալի համար:

##### Գաղատացիներին 6:1.

«Եղբայրներ՝ ր, եթե մեկը հանկարծ մի հանցանքից հաղթահարվի, դուք, որ հոգևոր եք, նմանին վերականգնեք հեգույթյան հոգով՝ ինքներդ զգույշ լինելով, որ դուք էլ փորձության չենթարկվեք»:

#### 3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկ, Գլուխ 4.-ը համընթաց է այս դասին: Ուսուցման ուղեցույցի 6-10-րդ նախագծերը նույնպես զուգահեռ են այս դասին:

#### 4. Դասի ջերմացում. «Աղյուսների օրինակը» (3-5 րոպե):

Այս դասը ներկայացրո՛ւ աղյուսների օրինակով:

##### Քեզ պետք կլինի.

1. Երկու-երեք շինարարական աղյուսներ, որոնցով տուն կամ բուխարի են կառուցում:
2. Մի կտոր ժապավեն և փաթեթավորելու համար կիրառվող զարդ:
3. Փոքր արկղեր՝ գրեթե աղյուսների չափով, կամ ստվարաթուղթ և կաշուն ժապավեն (սկոչ):
4. Կոշտ կազմով գիրք:

##### Պատրաստում.

1. Ժապավենով և զարդով փաթեթավորի՛ր աղյուսներից մեկը:
2. Եթե դու աղյուսի չափով փոքր տուփեր չունես, ուրեմն ինքդ պատրաստի՛ր դրանք ստվարաթղթով ու կաշուն ժապավենով: Քեզ պետք կլինի գոնե 5 կամ վեց ստվարաթղթե «աղյուս»:
3. Ֆլումաստերով նշի՛ր ստվարաթղթե աղյուսների վրա՝  
--չծխել

- չհայտնել
- ների՛ր մարդկանց
- հնազանդվի՛ր առաջնորդներին
- դիմադրի՛ր փորձություններին
- մի՛ ստիր

4. Մի կտոր թուղթ կպցրո՛ւ գրքի վրա և վրան գրի՛ր. *«Ինչպես աղյուսներով տուն կառուցել»:*

### Ներկայացնել օրինակը.

3

Քեզ երբևէ իսփե՞լ են աղյուսով (բարձրացրու շինարարական աղյուսներից մեկը): Որոշ մարդիկ սիրում են աղյուսներ շարտել մյուսների վրա: Աղյուսներ շարտելու ձևերից մեկն այն է, երբ քննադատում են քեզ: Անգամ երբ ինչ-որ մեկը փորձում է քեզ հանդիմանել աստվածաշնչյան ձևով, միևնույն է, ցավոտ է: Այդ պահին դու կարող ես ստվարաթղթե աղյուսներից մեկը գցել ուսանողներից մեկի վրա:

Հազվադեպ է պատահում, որ մարդիկ մեղմությամբ հանդիմանեն քեզ: Նրանք քեզ նվերի նման փաթեթավորված աղյուս են տալիս ու ասում. «Օգտագործի՛ր սա, որը քեզ կօգնի ավելի նմանվել Քրիստոսին»: Ուսանողներից մեկին տո՛ւր ժապավենով փաթեթավորված և զարդը վրան մի աղյուս:

Անցած դասին մենք ասացինք, որ հանդիմանություն ստանալը քեզ կօգնի, որ աճես: «Բայց, -կասես դու,- երբ մարդիկ ինձ վրա աղյուսներ են նետում, ինչպե՞ս դա կարող է օգնել, որ աճեմ: Նայի՛ր իմ շուրջը: Իմ շուրջը պետք է որ մի տոննա աղյուս լինի: Ամեն անգամ, երբ փորձում եմ մի բան անել, սայթաքում եմ դրանց վրա»:

Շատ հաճախ մարդիկ ընդամենը կարողանում են լավ մատնացույց անել մեր թերությունները: Երբ հերթը գալիս է աղյուս նետելուն, նրանց ձեռքերը միշտ կատարելապես պատրաստ են: Սակայն հազվադեպ է պատահում, որ այն անձնավորությունը, ով հանդիմանում է քեզ, ժամանակ հատկացնի օգնելու, որ իր տված աղյուսներից պիտանի մի բան կառուցես:

Երբ դու ինչ-որ մեկին հանդիմանում ես, երկու լավ նվե՛ր տուր նրանց. աղյուս և նաև օգնություն, թե ինչպես պիտանի ձևով օգտագործեն այդ աղյուսը: Ուսանողներից մեկին տո՛ւր աղյուս և գիրքը, որի վրա գրված է. **«Ինչպե՞ս աղյուսներից տուն կառուցել»:** Այնուհետև այդ անձնավորությանն առաջարկի՛ր քո օգնությունը, որպեսզի օգտագործի քո «աղյուսն» իր առօրյա կյանքը կառուցելու ժամանակ՝ ավելի քրիստոսակերպ դառնալու համար:

### Փոխանցիկ նախադասություն.

Այսօրվա դասի հիմնական նպատակն է՝ ուսումնասիրել, թե ինչ է ասում Աստված մարդկանց հանդիմանելու վերաբերյալ:

**5. Մարդկանց հանդիմանելու անցյալի փորձառություններ (5-10 րոպե):**

Այսօրվա դասին ցանկալի ընթացք տալու համար դու կարող ես մի քանի ուսանողների առիթ տալ՝ կիսվելու իրենց օրինակներով՝ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 7.-ի՝ «Ուրիշներին հանդիմանելու կամ քննադատելու իմ անցյալի փորձառությունը» բաժնից:

Եթե ուսանողները վարանեն կիսվել իրենց փորձառություններով, օրինակներ ր բեր քո անձնական կյանքից կամ իրավիճակներից, որ դու վերջերս ես ուսումնասիրել:

**6. Անցկացրո՛ւ Ա. կետը՝ «Ո՞ւմ պետք է ես հանդիմանեմ» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 36-37-րդ էջեր:**

Համառոտ անցի՛ր այս թեման, թե ովքեր են այն մարդիկ, որոնց քո ուսանողները պետք է հանդիմանեն: Այս հարցի պատասխանը կարող է բավականին տարբեր լինել՝ պայմանավորված նրանով, թե ովքեր են քո դասարանում: Մատնանշի՛ր, որ հանդիմանելը պատասխանատվություն է, ոչ թե ազատություն:

**Ա. Երկու հարցեր կարիք ունեն լուրջ ուշադրության:**

- Ովքե՞ր են այն մարդիկ, ում դու պետք է հանդիմանես:
- Ո՞վ է քեզ պատասխանատվություն տվել հանդիմանելու այդ մարդկանց:

Այս երկու հարցերը ծայրահեղ կարևոր են, որպեսզի այս դասի համար համապատասխան հիմք դնես: Եթե նրանք համարեն, որ ազատ են հանդիմանելու համար *ցանկացած մեկին*, ով սխալ է գործում, ուրեմն վտանգը հեռու չէ:

**Բ. Գրի՛ր այն մարդկանց անունները, որոնց, նրանք կարծում են, որ կարող են հանդիմանել:**

Օգտագործի՛ր գրատախտակը կամ պրոյեկտորը պատասխանները գրանցելու համար:

Գրի՛ր այդ մարդկանց անունները մի կողմում:

**Գ. Որոշի՛ր, թե ով է քեզ տվել պատասխանատվություն՝ հանդիմանելու մարդկանց:**

Նորից անցի՛ր այդ մարդկանց անուններով և փորձի՛ր պարզել, թե ով է քեզ տվել պատասխանատվություն՝ հանդիմանելու տվյալ անձնավորություններին:

Հնարավոր մի քանի պատասխաններ են՝ Աստված, ծնողները, հովիվը, դպրոցի ուսուցիչը, աշխատանքային ղեկավարը, ձեռնարկության տերը, ոստիկանությունը, դատավորը, երկրի օրենքը, նահանգը կամ քաղաքը, մարդկային ինչ-որ խմբի (ակումբ, թիմ և այլն) կանոնները:

**Ավարտելուց հետո բարձրացրո՛ւ այս հարցը.**

**Դ. Արդյո՞ք այդ անձնավորությունն իրականում իրավունք ուներ քեզ նման պատասխանատվություն տալու:**

**3**

Եթե տվյալ անձնավորությունը, ով քեզ լիազորել է, իրոք վարվել է իր իշխանության սահմաններում, ուրեմն դու կարող ես հանդիմանել այդ մարդկանց՝ միանգամայն վստահությամբ, որ դու իրականացնում ես քո պատասխանատվությունը: Ընդձի՛ր, որ դա կարիք կա միշտ անել սիրով:

Այս թեմայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն կա Ուսանողի ձեռնարկի 36-37-րդ էջերում:

**7. Թին Չելլենջի կանոնները մարդկանց հանդիմանելու վերաբերյալ:**

Եթե դու այս դասն անցկացնում ես Թին Չելլենջի կենտրոններից մեկում, կամ նմանատիպ ստացիոնար այլ ծառայությունում, կամ բանտում, ապա հիմա ժամանակն է քննարկելու քո ծրագրի կանոնները: Եթե ձեր կենտրոնը սրա վերաբերյալ կանոններ կամ քաղաքականություն չունի, ապա դու կարող ես այդ բանը քննարկել քո տնօրենի հետ, որպեսզի կարողանաս քո ուսանողներին հստակ պատասխան տալ նրանց պատասխանատվությունների վերաբերյալ:

Պարզաբանի՛ր, արդյո՞ք նրանք անձնակազմին հանդիմանելու իրավունք ունեն:

Հնարավոր է՝ դու ցանկանաս որոշ բացառություններ անել ընդհանուր կանոնից: Օրինակ, ենթադրենք, ձեր կենտրոնն իրավունք չի տալիս հանդիմանել անձնակազմին: Բայց և այնպես, եթե անձնակազմից մեկը, ով այդ պահին վարում է ուսանողների միկրոավտոբուսը, չի նկատում հնարավոր վթարային իրավիճակը, ապա ուսանողը պետք է բարձրաձայնի դա, ոչ թե անտեսի վտանգը և թույլ տա, որ վթարը տեղի ունենա:

**8. Անցկացրո՛ւ Բ. կետը՝ «Ինչպիսի՞ աստվածաշնչյան վերաբերմունք պետք է ունենալ մարդկանց հանդիմանելիս»:**  
**(10-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 37-40-րդ էջեր:**

Դասի այս մասը ներկայացնելիս բացատրի՛ր, որ մենք ավելի ուշ կքննարկենք մարդկանց հանդիմանելու վերաբերյալ տարբեր **մեթոդներ**: Հիմա մենք ուզում ենք խոսել **մտքերի** մասին, որ պետք է ունենանք, երբ պատրաստվում ենք հանդիմանել մեկին, ով ինչ-որ բան սխալ է արել:



Բացատրի՛ր, որ անկախ այն բանից, թե ինչ մեթոդ ենք գործադրում, մենք պետք է աստվածաշնչյան վերաբերմունք կիրառենք, երբ ինչ-որ մեկին «աղյուս» ենք տալիս:

**Ունենալ աստվածաշնչյան վերաբերմունք մարդկանց հանդիմանելիս:**

1. Այս մարդն Աստծո հատուկ ընկերներից մեկն է:  
Ես ուզում եմ, որ կարողանամ նրա մասին լավ վկայություն տալ:
2. Ի՞նչ սխալ է արել այս մարդը:
3. Ո՞րն է Աստծո ձևն այս խնդիրն ուղղելու հարցում:
4. Ինչպե՞ս կարող եմ օգնել այս մարդուն՝ հետևել Աստծո ճանապարհին:

3

*Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկ, էջ 38-ից:*

**9. Անցկացրո՛ւ Գ-1. կետը՝ «Երեք բաներ՝ մարդկանց հանդիմանելու ճիշտ մեթոդ ընտրելու համար» (5 թույլ), Ուսանողի ձեռնարկ, 40-42-րդ էջեր:**

Գ. կետը՝ «*Ինչպե՞ս ես պետք է հանդիմանեմ մարդկանց*», վերաբերում է մի քանի մեթոդների, որոնք դու կարող ես կիրառել մարդկանց հանդիմանելիս:

Ձեր քննարկումները սկսե՛ք՝ անցնելով ենթակետ 1.-ը՝ «*Երեք բաներ՝ մարդկանց հանդիմանելու ճիշտ մեթոդ ընտրելու համար*»: Արագ ներկայացրո՛ւ երեք կետերը, որոնք քեզ կօգնեն ճիշտ մեթոդ ընտրել ինչ-որ մեկին հանդիմանելու համար: Փորձի՛ր մի քանի օրինակներ բերել, որպեսզի պարզաբանես երեք բանալի մտքերից յուրաքանչյուրը:

**Երեք բաներ՝ մարդկանց հանդիմանելու ճիշտ մեթոդ ընտրելու համար**

1. Ո՞ւմ եմ ես հանդիմանում:
2. Ինչքա՞ն լուրջ է տվյալ անձնավորության կատարած սխալը:
3. Զո անհատականությունը կազդի այն մեթոդի վրա, որ դու օգտագործում ես:

*Մեջբերումն արված է Վերաբերմունքներ, Ուսանողի ձեռնարկ, 40-42-րդ էջերից:*

10. Ներկայացրո՛ւ Գ-2. կետը՝ «Մարդկանց հանդիմանելու աստվածաշնչյան մեթոդներ» (5 բույս), Ուսանողի ձեռնարկ, 43-47-րդ էջեր:

Դասաժամի մեծ մասն անցկացրո՛ւ՝ քննարկելով մարդկանց հանդիմանելու աստվածաշնչյան տարբեր մեթոդներ: Դասի այս մասը ներկայացնելիս մատնանշի՛ր, որ կան բազմաթիվ համարներ, որոնք խոսում են մարդկանց հանդիմանելու մասին: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չառանձնացնենք մի համար և ասենք. «Սա աստվածաշնչյան միակ մեթոդն է, և այս մեթոդը պետք է կիրառվի բոլոր դեպքերում»: Աստված կարող է մեզ օգնել՝ աճել մեր հասկացողության մեջ, որպեսզի տարբերակենք, թե ո՛ր կիրավիճակում ո՛ր մեթոդը կիրառենք: Երեք հիմնական համարներ հիմք են հանդիսանում դասի այս հատվածի համար.

Գաղատացիներին 6:1

Մատթեոս 18:15-17

Բ Տիմոթեոս 3:16

Աստվածաշնչյան այս տարբեր մեթոդները քննարկելիս թող ուսանողները կարդան հանդիմանելու յուրաքանչյուր մեթոդին վերաբերող համարները: Ուշադիր քննարկի՛ր հիմնական կետերը, որոնք գտնվում են մարդկանց հանդիմանելու վերաբերյալ յուրաքանչյուր համարի մեջ:

Թող ուսանողներն օգտագործեն իրենց պատասխանները, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6.-ի՝ «Աստվածաշնչյան հայացք ուրիշներին հանդիմանելու վերաբերյալ» բաժնի 1., 2. և 3. հարցերին: Այս մեթոդները համակցի՛ր այն չորս մտքերի հետ, որ գրված են Ուսանողի ձեռնարկի 38-40-րդ էջերում, որոնք պետք է ձևավորեն նրանց վերաբերմունքն այս մեթոդներից յուրաքանչյուրն օգտագործելու ժամանակ:

Փորձի՛ր օրինակներ բերել քո անձնական կյանքից, կամ այլ ժամանակակից օրինակներ, թե ինչպես է այս մեթոդներից յուրաքանչյուրն օգտագործվել, և ինչ արդյունքներ են եղել:

11. Անցկացրո՛ւ Գ-2.-Ա. կետը՝ «Գաղատացիներին 6:1-ի մեթոդը մարդկանց հանդիմանելու համար» (5-10 բույս), Ուսանողի ձեռնարկ, էջ 43-44:

Նախքան մարդկանց հանդիմանելու՝ Գաղատացիներին 6:1-ի մեթոդը քննարկելը՝ քո ուսանողներին խնդրի՛ր կարծիք հայտնել, թե ում են Աստծո Խոսքը լիազորում, որ կատարի հանդիմանելու գործը: Այս համարն ասում է, որ ովքեր «հոգևոր» են, նրանք պետք է կատարեն հանդիմանության գործը:

Գաղատացիներին 6:1.

«Եղբայրներ՛ր, եթե մեկը մի հանցանքից հաղթահարվի, դուք որ հոգևոր եք, նմանին վերականգնե՛ք հեգույթյան հոգով, ինքներդ զգույշ լինելով, որ դուք էլ փորձության չենթարկվեք»:

Մատնանշի՛ր, որ եթե նրանք ընդամենը մի քանի շաբաթվա քրիստոնյաներ են, ապա, հավանաբար, չպետք է հանդիմանեն մարդկանց, եթե իհա՛րկե հատուկ հանձնարարություն չունեն ինչ-որ մեկի հանդեպ, օրինակ՝ իրենց երեխայի:

Մարդկանց հանդիմանելու՝ Գաղատացիներին 6:1-ի մեթոդը կենտրոնանում է երկու առանձնահատուկ կետերի վրա: Առաջինը, մեր նպատակը պետք է լինի՝ վերականգնել տվյալ անձնավորությանը: Մա շատ ավելին է պահանջում, քան պարզապես նրան ասելը, թե ինչն է սխալ արել: Մա կարող է ամենադժվար մասը լինել հանդիմանելու այս ողջ գործընթացի մեջ. կարող է իր մեջ ներառել մի քանի քայլեր, այլ ոչ թե ընդամենը 60 վայրկյանանոց ընդդիմախոսություն:

Երկրորդ բանը, որ մարդկանց հանդիմանելու այս մեթոդը ներառում է, այն է, որ մենք պետք է «հեզության հոգով» անենք հանդիմանությունը: Խնդրի՛ր քո ուսանողներին, որ օրինակներ բերեն, թե ինչպես են նրանց հեզությամբ հանդիմանել: Եթե չկարողանան որևէ օրինակ հիշել, ապա նրանք ապագայում կդժվարանան դա անել:

Դու կարող ես քննարկել, թե ինչքան ավելի ցավոտ կարող է լինել հանդիմանություն ընդունողի համար, քան հանդիմանողի: Քեզ կարող է թվալ, որ դու մեղմ ես վերաբերվել, սակայն ինչպե՞ս է իրեն զգացել նա, ում դու հանդիմանել ես:

Մեղմ լինելու պարագայում շեշտի՛ր հստակ լինելու կարևորությունը: Մեղմ լինել՝ չի նշանակում պարզապես ակնարկել, որ մարդը թերություն ունի: Մենք պետք է ճշմարտությունն ասենք սիրով, սակայն անպայման պետք է ասենք, որպեսզի նրանք հասկանան, որ մենք նրանց ընդդիմախոսում ենք իրենց կյանքում եղած մեղքի համար:

Վերջին բանը, որ նշված է համարում, արժանի է որոշակի քննարկման. **«ինքներդ զգույշ լինելով, որ դուք էլ փորձության չենթարկվեք»:** Մատնանշի՛ր, որ պարտադիր չէ, որ մենք կատարյալ լինենք, որպեսզի կարողանանք մարդկանց հանդիմանել, սակայն պետք է զգույշ լինենք մեր անձերի հարցում: Այլ կերպ ասած՝ տվյալ մարդու կյանքում եղած մեղքը մեզ համար զարթուցիչի դեր պետք է կատարի, որպեսզի մեզ զուշացնի՝ սթափ լինել մեր սեփական կյանքի համար՝ ընդդեմ սատանայի գայթակղությունների:

12. Անցկացրո՛ւ Գ-2.-Բ. կետը՝ «Մատթեոս 18:15-17-ի մեթոդը մարդկանց հանդիմանելու համար» (10-20 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 44-45:

Թող քո ուսանողներից մեկը կարդա հանդիմանության մեթոդին վերաբերող համարը: Մատնանշի՛ր, որ գուցե այս մեթոդը մարդկանց հանդիմանելուն վերաբերող՝ Աստվածաշնչի ամենածանոթ մեթոդն է:

Սկզբում թող քո ուսանողները գտնեն այս մեթոդն օգտագործելու երեք սահմանափակումները.

1. Այդ անձնավորությունը պետք է քրիստոնյա՝ հավատացյալ լինի:
2. Այդ անձնավորությունը պետք է մեղք գործած՝ Աստծո օրենքները խախտած լինի:
3. Այդ անձնավորությունը պետք է քո՛ դեմ մեղք գործած լինի: Եթե նա մեղք է գործել մեկ այլ անձնավորության դեմ, ապա դու իրավունք չունես նրան հանդիմանելու՝ ըստ այս համարի:

Թող քո ուսանողները գտնեն երեք քայլեր այս մեթոդի մեջ և դրանք գրեն գրատախտակի կամ մեծ թղթի վրա ու այն փակցնեն դասասենյակի պատին:

**Մատթեոս 18:15-17.**

«Եթե եղբայրդ քո դեմ մեղանչի, գնա՛ և հանդիմանի՛ր նրան, երբ դու և նա մենակ եք. եթե քեզ լսի, շահած կլինես քո եղբորը: Իսկ եթե չլսի, ապա քեզ հետ վերցրո՛ւ մեկ կամ երկու հոգի, որ երկու կամ երեք վկայի բերանով ամեն բան հաստատվի: Իսկ եթե նրանց էլ չլսի, հայտնի՛ր եկեղեցուն, իսկ եթե եկեղեցուն էլ չլսի, թող նա քեզ համար հեթանոսի ու մաքսավորի պես լինի»:

Անցե՛ք ամեն մի քայլով և քննարկե՛ք, թե ինչ պետք է արվի: Մատնանշի՛ր, որ ըստ քայլ 1.-ի, եթե ինչ-որ մեկը գա քեզ մոտ և պատմի, թե ինչպես է ոմն մեկը նրա դեմ մեղք գործել, դու պետք է նրան ասես, որ գնա և այդ անձնավորության հետ առանձին խոսի՝ համաձայն Մատթեոս 18:15-ի ցուցումի: Երբ նա արդեն դա արել է, և տվյալ անձնավորությունը մերժել է հանդիմանությունը, ապա դու կարող ես մտածել այդ անձնավորության մոտ գնալու մասին:

Ուշադի՛ր եղիր, որ դասի այս հատվածը խարսխված պահես իրականության վրա, ո՛չ թե տեսության: Բե՛ր այս հարցին վերաբերող մի քանի օրինակներ քո կյանքից կամ քո շրջապատում եղող մարդկանց կյանքից: Մի՛ մտիր քննարկման մեջ այնպիսի մանրամասնությունների շուրջ, ինչպիսին են՝ «իսկ ի՞նչ կլինի, եթե...», քանի որ դրանք հիմնված են ոչ թե իրականության, այլ երևակայությունների վրա:

Մատնանշի՛ր, որ այս համարը, որպես նախապայման սույն մեթոդը կիրառելու համար, չունի սահմանափակում առ այն, թե որքան հոգևոր ես դու:

Եթե անգամ դու նորադարձ քրիստոնյա ես, նորմալ է քո ցանկությունը՝ այն կիրառելու համար:

Շեշտի՛ր այս ուղեցույցը հենց տվյալ պահին կիրառելու կարևորությունը, երբ նրանք պատրաստվում են ինչ-որ մեկին հանդիմանել: Եթե մարդիկ հետևեն Մատթեոս 18-ի պատկերին, շատ վիճաբանություններ և խզված հարաբերություններ կկանխվեն:

Ցանկության դեպքում, դու կարող ես քո ուսանողներին հանձնարարել, որ նայեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 7.-ի՝ «Ուրիշներին հանդիմանելու կամ քննադատելու իմ անցյալի փորձառությունը» բաժնի իրենց օրինակները՝ տեսնելու, թե արդյո՞ք նրանք տվյալ անձնավորությանը հանդիմանել էին առանձին, թե այլ մարդիկ էլ էին ներկա եղել այդ պահին: Նաև՝ արդյո՞ք նրանք քննարկել էին ուրիշ մարդկանց հետ այդ խնդիրը՝ նախքան այդ անձնավորության հետ խոսելը, ով իրենց դեմ մեղք էր գործել:

**13. Անցկացրո՛ւ Գ-2.-Գ. կետը՝ «Բ Տիմոթեոս 3:16-ի մեթոդը մարդկանց հանդիմանելու վերաբերյալ» (10-20 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 45-47-րդ էջեր:**

Հենց սկզբից բացատրի՛ր, որ Բ Տիմոթեոս 3:16-ն ուղղակի չի խոսում այն մասին, թե ինչպես պետք է մարդիկ մեկը մյուսին հանդիմանեն: Համարի համատեքստն այն մասին, է, թե ինչպես կարող է Աստվածաշունչն օգտագործվել քրիստոնյայի կյանքում: Բայց և այնպես, այս համարի չորս բանալի մտքեր մեզ տալիս են աստվածաշնչյան չորս հիանալի սկզբունքներ մարդկանց հանդիմանելու վերաբերյալ:

**Բ Տիմոթեոս 3:16.**

**«Ամբողջ Գիրքն Աստծո շունչն է և օգտակար է վարդապետության, հանդիմանելու, ուղղելու և արդարությամբ խրատելու համար»:**

**Բ Տիմոթեոս 3:16. (Արևմտահայերեն թարգմանություն)**

**«Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շիտկելու և արդարության խրատելու համար»:**

Երբ մի ուսանող կարդա վերջացնի այս համարը, գրի՛ր այս չորս մեթոդները մի մեծ թղթի վրա և փակցրու դասասենյակի պատին: Առանձին-առանձին քննարկի՛ր այս մեթոդները: Լրացուցիչ մանրամասներ կարող ես գտնել Ուսանողի ձեռնարկում:

Այս մեթոդներն ուսումնասիրելիս, մատնանշի՛ր, որ դրանք կարող են օգտագործվել անհատապես՝ որևէ անձնավորության հետ, կամ էլ խմբային հիմունքներով: Այս մեթոդներից որոշները կարող են դիտվել որպես անուղղակի մեթոդ ինչ-որ մեկին հանդիմանելու համար: Առաջին. Մովորեցնելով ճշմարտությունը՝ չի կարող անգամ ուղղակի մատնանշել այն անձնավորությանը, ով սխալ է արել:

Փորձի՛ր թեմային համապատասխան օրինակներ բերել՝ ցույց տալու համար, թե ինչպես ես դու (կամ ուրիշները) կիրառել այս մեթոդները: Ցանկության դեպքում կարող ես ուսանողներին հանձնարարել գտնել, թե այս մեթոդներից որն է Հիսուսը կիրառել հետևյալ իրավիճակներում.

- ա) հարուստ երիտասարդը Մարկոս 10:17-22
- բ) օրենքի ուսուցիչը Ղուկաս 10:25-38
- գ) շնության մեջ բռնված կինը Հովհաննես 8:1-11
- դ) Պետրոսը Մատթեոս 16:21-28

## 3

**14. Անցկացրո՛ւ Դ. կետը՝ «Որո՞նք են ամենազլիսավոր բաները մարդկանց հանդիմանելու հարցում» (5-10 բույս), Ուսանողի ձեռնարկ, 48-49-րդ էջեր:**

Արա՛գ անցիր Ուսանողի ձեռնարկում գտնվող այս նյութը, որը վերաբերում է վերոնշյալ կետերից յուրաքանչյուրին: Երբ քննարկեք Ենթակետ 2.-ը՝ «Մոտեցի՛ր տվյալ անձնավորությանն ազատ մտքով», շեշտադրի՛ր հարցեր տալու կարևորությունը՝ որպես բանալի մաս ցանկացած մեթոդում, որ նրանք կիրառում են մարդկանց հանդիմանելու համար:

Երբ քննարկեք Ենթակետ 4.-ը՝ «Քո մոտեցման մեջ դրական է՞լիք», ընդգծի՛ր երեք ճշմարտություններ Հակոբոս 1:19-ից.

- ա) արագաշա՛րժ եղիր լսելու մեջ,
- բ) ծանրաշա՛րժ եղիր խոսելու մեջ,
- գ) ծանրաշա՛րժ եղիր բարկանալու մեջ:

Ժամանա՛կ հատկացրու քննարկելու համար Ենթակետ 6.-ը՝ «Ի՞նչ անեմ, եթե նրանք չընդունեն իմ հանդիմանությունը»: Այնպե՛ս արա՛ նրանք տեսնեն, թե որքան կարևոր է, որ Աստծո կամեցած ձևով անեն, այլ ոչ թե պարզապես նայեն, թե ինչպես են մարդիկ արձագանքում իրենց հանդիմանությանը: Ընդգծի՛ր, որ մենք չենք կարող ինչ-որ մեկին հարկադրել, որ ընդունի մեր հանդիմանությունը:

**15. Հանդիմանել մարդկանց և ներել մարդկանց (5-15 բույս):**

Դու կարող ես ուսանողներին հանձնարարել, որ նրանք քննարկեն իրենց պատասխանները, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6.-ի՝ «Աստվածաշնչյան հայացք մարդկանց հանդիմանելուն» բաժնի 4-րդ և 5-րդ հարցերին, այն է՝

- 4) Ի՞նչ է ասում Հիսուսը մեր դեմ մեղք գործած մարդկանց ներելու մասին (Մատթեոս 18:15-22):

- 5) Քո կարծիքով պե՞տք է դու ներես այն քրիստոնյային, ով հրաժարվում է լսել, երբ դու փորձում ես հանդիմանել նրան: Բացատրի՛ր քո պատասխանը:

Այս երկուսը երկու կարևոր հարցեր են բարձրացնում մարդկանց հանդիմանելու գործընթացի վերաբերյալ: Եթե անգամ ուսանողները մարդկանց հանդիմանելիս ուշադիր հետևում են աստվածաշնչյան ուղեցույցին, միևնույն է, մարդիկ կարող են նրանց տհաճ ձևով պատասխանել:

Քո ուսանողները չպետք է համարեն, որ աստվածաշնչյան վերաբերմունք և մեթոդներ կիրառելը երաշխավորում է, որ քննարկումը խաղաղ և հաջողված կլինի: Նրանք պետք է պատրաստ լինեն հանդիպելու բարկության և դեմքին շարսոված տհաճ խոսքերի, եթե անգամ փորձեն ամեն բան ճիշտ անել:

Իրական ներման իմաստը շատ շուտով պարզ կդառնա, երբ նրանք հանդիպեն այս տեսակ իրավիճակների: Մատնանշի՛ր, որ մենք պետք է աստվածաշնչյան վերաբերմունք կիրառենք, երբ հանդիմանում ենք մարդկանց, և պատասխանենք ներողամտությամբ՝ անկախ նրանից, թե ինչպես նրանք կարձագանքեն մեր հանդիմանությանը:

**16. Անցկացրո՛ւ Ե. կետը՝ «Որո՞նք են աստվածաշնչյան սահմանափակումները մարդկանց հանդիմանելու հարցում» (10-20 բույե), Ուսանողի ձեռնարկ, 49-53-րդ էջեր:**

Արագ անցկացրո՛ւ Ուսանողի ձեռնարկի յոթ ենթակետերը: Քո դասաժամը բաժանի՛ր յուրաքանչյուր թեմայի վրա՝ ելնելով քո ուսանողների կարիքից:

Եթե դուք դեռ չեք քննարկել **«Ես պե՞տք է ուղղեմ իմ առաջնորդներին»** թեման, ապա ժամանա՛կ հատկացրու այստեղ (Ենթակետ 6.) և այնպե՛ս արա, որ նրանք հասկանան, թե ինչպես պետք է մոտենան այս հարցին: Մի հարց, որ ցանկության դեպքում դու կարող ես բարձրացնել, քո առաջնորդներին հանդիմանելու հետևանքներն են: Եթե դու հանդիմանում ես քո աշխատանքային ղեկավարին, քեզ, հնարավոր է, հեռացնեն աշխատանքից: Դու պետք է հաշվի առնես քո առաջնորդին հանդիմանելու գինը՝ նախքան այդ քայլն անելը: Մա չի նշանակում, որ դու չպետք է հանդիմանես քո առաջնորդին:

Դու կարող ես քո ուսանողներին առաջարկել, որ քննարկեն իրենց պատասխանները, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6.-ի (հարց 6.) օրինակի ուսումնասիրման ժամանակ:

**«Ի՞նչ պետք է անի Կարինեն»: Բացատրի՛ր, թե ինչո՞ւ:**

### 17. Անձնական կիրառություն:

Այսօրվա անձնական կիրառության համար թող ուսանողները երեք բան անեն.

**Ա. Քաջալերի՛ր նրանց՝ անգիր անել չորս մտքերը,** որոնք ներառված են մարդկանց հանդիմանելու համար կիրառվելիք՝ աստվածաշնչյան վերաբերմունքի մեջ: Դրանց վերաբերյալ ավելի շատ տեղեկության համար տե՛ս Ուսանողի ձեռնարկի 38-40-րդ էջերը:

**3**

#### Ունենալ աստվածաշնչյան վերաբերմունք մարդկանց հանդիմանելիս:

1. Այս մարդն Աստծո հատուկ ընկերներից մեկն է:  
Ես ուզում եմ, որ կարողանամ նրա մասին լավ վկայություն տալ:
2. Ի՞նչ սխալ է արել այս մարդը:
3. Ո՞րն է Աստծո ձևն այս խնդիրն ուղղելու հարցում:
4. Ինչպե՞ս կարող եմ օգնել այս մարդուն՝ հետևել Աստծո ճանապարհին:

*Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկ, էջ 38-ից:*

#### Բ. Թող նրանք հիշողության օգնական պատրաստեն:

Յուրաքանչյուր ուսանողի տո՛ւր մի փոքրիկ քարտ: Թող նրանք դրա վրա գրեն այն աստվածաշնչյան վերաբերմունքը, որը կիրառում են մարդկանց հանդիմանելիս: Նրանց տո՛ւր ֆլումաստերներ կամ մատիտներ՝ քարտերն իրենց ուզած ձևով ձևավորելու համար:

Նաև քարտի վրա թող գրեն այն բանալի մտքերը, որոնք նրանք կարիք ունեն հիշելու, երբ ինչ-որ մեկին հանդիմանում են: Օրինակ, նրանք կարող են ցանկանալ գրել համարներից մեկը, որ այսօր քննարկել էք: Ավարտելուց հետո քաջալերի՛ր նրանց, որ քարտը փակցնեն իրենց ննջասենյակում կամ կիրառեն որպես էջանիշ:

**Գ. Այսօրվա դասն ավարտի՛ր նվիրման աղոթքով:** Քաջալերի՛ր ուսանողներին, որ նրանցից ամեն մեկը նվիրման աղոթք բարձրացնի Աստծուն նրա համար, որ սկսելու է կիրառել աստվածաշնչյան վերաբերմունք և աստվածաշնչյան մեթոդներ՝ մարդկանց հանդիմանելիս:



## 18. Հանձնարարություններ:

- Ա. Գնահատակա՛ն դիր Նախագիծ 2., 4., 6. և 7.-ի համար:
- Բ. Բացատրի՛ր, թե ինչպես է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8.-ը համընթաց գնում այն աշխատանքի հետ, որը նրանք արել էին Նախագիծ 7.-ում: Ընդգծի՛ր, որ այս նախագծի նպատակն է օգնել նրանց, որ տեսնեն, թե ինչպես կարող են կիրառել աստվածաշնչյան վերաբերմունքը մարդկանց հանդիմանելու ժամանակ:
- Գ. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Գաղատացիներին 6:1-ի վերաբերյալ:
- Գաղատացիներին 6:1.**
- «Եղբայրնե՛ր, եթե մեկը մի հանցանքից հաղթահարվի, դուք, որ հոգևոր եք, նմանին վերականգնեք հեգույթյան հոգով, ինքներդ զգույշ լինելով, որ դուք էլ փորձության չենթարկվեք»:**
- Դ. Կամ այսօր, կամ հաջորդ դասին, տո՛ւր հարցաշար այն մտքերի վերաբերյալ, որոնք ներառված են աստվածաշնչյան վերաբերմունքի մեջ, և որոնք պետք է կիրառենք, երբ մեզ հանդիմանում են: Նրանք պետք է հիշելով համապատասխան հերթականությամբ գրեն հինգ մտքերը, որոնք ներառված են այս վերաբերմունքի մեջ: Ուսուցիչը կարող է լրացուցիչ միավորներ տալ, եթե նրանք գրեն նաև աստվածաշնչյան հղում յուրաքանչյուր քայլի համար, և էլի լրացուցիչ միավոր, եթե նրանք մեջբերեն այն համարը, որը համընթաց է յուրաքանչյուր քայլի հետ:

**Աստվածաշնչյան վերաբերմունք ունենալ, երբ քեզ հանդիմանում են:**

1. Երբ ինձ հանդիմանում են (կամ քննադատում): Առակաց 10:17
2. Ես ուշադիր կլսեմ: Հակոբոս 1:19
3. Ես շնորհակալ եմ, որ նա ինձ հանդիմանում է:  
Ա Թեսաղոնիկեցիներին 5:18
4. Ես սխալ էի: Առակաց 28:13
5. Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա:  
Առակաց 15:31-32

*Մեջբերումն արված է Վերաբերմունքներ, Ուսանողի ձեռնարկ, էջ 18-ից:*

- Ե. Բացատրի՛ր, որ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 9.-ի՝ «*Կիրառել իմ նոր վերաբերմունքն ինչ-որ մեկին հանդիմանելու ժամանակ*» բաժինն ընտրովի է: Նրանք ստիպված չեն լրացնել այն՝ նախքան դասընթացի ավարտը:
- Զ. Եթե դու Դաս 4-րդի համար ընտրում ես Տարբերակ 2.-ը, ապա թող նրանք լրացնեն մի կարճ նախագիծ, որը նրանց կնախապատրաստի հաջորդ դասաժամի համար:

Կազմի՛ր նախագիծը, որպեսզի նրանք այն բերեն հաջորդ դասաժամի համար: Թող նրանք նկարագրեն երկու կամ երեք օրինակներ, որոնք ցույց կտան նրանց վերաբերմունքը որևէ կոնկրետ թեմայի մասին, որը դու ծրագրել ես, որ քննարկեք: Դու կարող ես այն կազմել ըստ Նախագիծ 3.-ի կամ Նախագիծ 7.-ի ձևաչափի (ֆորմատ):

### 3

#### 19. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:  
 Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:  
 Ո՞ր մասերն էին ուսանողների համար ամենադժվար հասկանալի:  
 Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

## Դաս 4.

### Ընդհանուր ներածություն

#### 1. Այսօրվա դասը ծրագրավորելու համար դու երկու տարբերակ ունես:

**Տարբերակ 1.** Դասն անցկացրո՛ւ՝ քննարկելով Դաս 2.-ում և 3.-ում ներկայացված երկու վերաբերմունքները:

«Իմ վերաբերմունքը, երբ ինձ հանդիմանում են կամ քննադատում»:

«Իմ վերաբերմունքը, երբ ես հանդիմանում եմ ուրիշներին»:

**Տարբերակ 2.** Դասն անցկացրո՛ւ՝ մեկ կամ ավելի վերաբերմունքներ ուսումնասիրելով, որոնք դու զգում ես, որ կարող են օգտակար լինել քո դասարանին: Տե՛ս այս՝ Ուսուցչի ձեռնարկի 47-րդ էջի 3-րդ կետում առաջարկված որոշ թեմաներ այդ դասաժամի վերաբերյալ:

Այս երկու տարբերակներն էլ ավելի մանրամասն քննարկված են 43-50-րդ էջերում:

#### 2. Ռեսուրսներ քո դասը ծրագրավորելու համար:

«Աստվածաշնչյան ստեղծագործ ուսուցում», հեղինակ՝ Լարրի Բիչարդս (Մուդի տպագրություն) (*Creative Bible Teaching*, by Larry Richards (Moody Press)): 9-16-րդ գլուխները մի քանի հրաշալի մտքեր ունեն դասի պատրաստման վերաբերյալ: Այդ մտքերը կարող են քեզ համար օգտակար լինել այս դասի պատրաստման համար:

#### 3. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն այս դասի համար:

Այսօրվա Աստվածաշնչյան բանալի ճշմարտությունը (ԱԲՃ) կախված է այն բանից, թե ինչ ես դու որոշել ուսուցանել: Եթե ընտրել ես **Տարբերակ 1.-ը**՝ «Իմ վերաբերմունքը, երբ ինձ հանդիմանում են կամ քննադատում» և/կամ «Իմ վերաբերմունքը, երբ ես հանդիմանում եմ ուրիշներին», դու պարզապես կարող ես կիրառել ԱԲՃ-ն՝ ելնելով այս երկու դասերից:

Եթե ընտրել ես **Տարբերակ 2.-ը**, ապա դու պետք է գրես քո սեփական Աստվածաշնչյան բանալի ճշմարտությունը: ԱԲՃ-ի նպատակն է՝ ամբողջացնել այս դասաժամի հիմնական նպատակը մեկ նախադասությամբ մեջ:

#### 4. Աստվածաշնչյան բանալի համար այս դասի համար:

Եթե ընտրել ես **Տարբերակ 1.-ը**, բանալի համարը կարող է լինել նույնը, ինչ Դաս 2.-ի և/կամ 3.-ի համար: Եթե ընտրել ես **Տարբերակ 2.-ը**, փորձի՛ր գտնել համար, որը հստակ կերպով կապված լինի այն թեմայի հետ, որը դու ուզում ես անցկացնել այս դասին:

**Դաս 4.****Տարբերակ 1.**

**Իմ վերաբերմունքը, երբ ինձ հանդիմանում են կամ քննադատում:**

**Իմ վերաբերմունքը, երբ ես հանդիմանում եմ ուրիշներին:**

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն. նույնը, ինչ Դաս 2.-ում և/կամ 3.-ում:

---



---



---

2. Բանալի համար. նույնը, ինչ Դաս 2.-ում և/կամ 3.-ում:

---



---



---

3. Ուրվագծի՝ ր քո դասի ռազմավարությունը:

Ունեցի՛ր մի քանի հստակ մտքեր այն մասին, թե ինչ ես ուզում քննարկել այսօրվա դասին: Հնարավոր է՝ դու ցանկանաս որոշ ժամանակ հատկացնել քննարկելու համար այն հարցերը կամ խնդիրները, որ նրանք ունենում են, երբ փորձում են կիրառել այս երկու վերաբերմունքները: Պատրաստ ունեցի՛ր քո սեփական ծրագիրը, եթե նրանք որևէ հարց չունենան:

4. Օգտագործի՛ր օրինակի ուսումնասիրություններ:

Շատ օգտակար կարող է լինել առանձին դեպքերն ուսումնասիրելը, երբ մարդիկ տարբեր իրավիճակներում են կիրառել այս վերաբերմունքները: Նրանց օրինակներն Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 3.-ից և 7.-ից կարող են շատ օգտակար լինել այստեղ: Թող նրանք գտնեն, թե ինչ վերաբերմունքներ էին ունեցել տվյալ օրինակի երկու անձնավորությունները: Ինչքան՞ վ էին նրանք մոտ աստվածաշնչյան պատկերին: Ինչպե՞ս կարող էին նրանք ավելի աստվածաշնչյան լինել իրենց արձագանքների մեջ:

## 5. Կազմակերպել կարճ ներկայացումներ և դերակատարումներ:

Թող ուսանողները դերակատարումների միջոցով ներկայացնեն իրավիճակներ, որտեղ մի անձնավորություն հանդիմանում է մյուսին: Թող նրանք բառերով արտահայտեն իրենց մտքերը: Մարլեն Դ. Լեֆեվերի՝ «Ստեղծագործ ուսուցման մեթոդներ» գիրքը (Marlene D. LeFever's book *Creative Teaching Methods* (David C. Cook Publisher)) հիանալի մի բաժին ունի, թե ինչպես օգտագործել դերակատարումն այս դասի ժամանակ:

Մեկ այլ լավ ռեսուրս, որը բացատրում է, թե ինչպես օգտագործել կարճ ներկայացումներն ու դերակատարումները, Էդ Ստյուարդի և Նիլ Մաք Բրայդի՝ «Ինչպես կազմակերպել աստվածաշնչյան ուսուցումն ակտիվ կերպով» գիրքն է (*How to Do Bible Learning Activities*, by Ed Stewart & Neal McBride (Gospel Light Pub.)): Կան 1-ին հատորի երկու տարբերակները, մեկը մեծահասակներին ուսուցանելու համար է, մյուսը՝ 7-12 տարեկաններին: 2-րդ հատորը նույն վերնագրով է, սակայն միայն՝ 7-12 տարեկանների համար:

Գրի՛ր դերակատարման մասնակիցների դերերը, որպեսզի նրանք իմանան (նաև՝ դու), թե ինչ պետք է անեն:

Քո ուսանողների ներկայացումը, երբ ցույց տան դասարանին, թող մեկը տեսաձայնագրի: Ուսանողներին դուր կգա նորից տեսնել իրենց, և ամեն անգամ, երբ դիտեն տեսաձայնագրությունը, դա կօգնի ավելի լավ հասկանալ այն, ինչը դու փորձում ես նրանց ուսուցանել այս դասի միջոցով:

## 6. Աստվածաշնչյան համարների օգտագործում:

Դու կարող ես այս դասաժամի որոշ մասն անցկացնել՝ քննարկելով աստվածաշնչյան համարներ, որոնք կապ ունեն այս վերաբերմունքի հետ: Լավագույն բանը, որ դու կարող ես անել, նախապես այդպիսի համարների ցուցակ կազմելն է: Քո ցանկությամբ ուսանողները կարող են գտնել այդ համարները և կողմնորոշվել, թե ինչպես են դրանք առնչվում այս վերաբերմունքներին:

Քո ցանկությամբ ողջ դասարանը կարող է դա անել միասին, կամ էլ բաժանի՛ր նրանց փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին տո՛ւր առանձին համարներ: Յուրաքանչյուր խմբին տո՛ւր մեծ թղթեր և ֆլումաստերներ իրենց բացահայտումները գրելու համար: Այնուհետև յուրաքանչյուր խումբ թող ողջ դասարանի առաջ ներկայացնի իր գտածները:

Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 10.-ի՝ «Աստվածաշնչյան իմաստություն և հանդիմանություն» բաժինը նույնպես կարող է արդյունավետ կերպով օգտագործվել այստեղ:

**7. Անձնական կիրառություն:**

Դասն ամփոփի՛ր համապատասխան անձնական կիրառությամբ: Որոշ մտքերի համար տե՛ս նախորդ երկու դասերի ժամանակ տրված անձնական կիրառությունները:

---



---



---



---

**8. Հանձնարարություններ:**

- Ա. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4.-ի համար, եթե դեռ չես արել:
- Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց Նախագիծ 5.- ի համար կամ այսօր, կամ հաջորդ դասին:
- Գ. Բացատրի՛ր քո ուսանողներին, որ նրանք պետք է արդեն լրացրած լինեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8.-ը՝ նախքան հաջորդ դասը, որն այս դասընթացի ստուգարքի ժամանակահատվածն է:
- Դ. Դասի վերջում տո՛ւր հարցաշար՝ *«Աստվածաշնչյան վերաբերմունքներ ունենալ, երբ քեզ հանդիմանում են»* բաժնի վերաբերյալ, եթե անցած դասի վերջում չես արել:



**Աստվածաշնչյան վերաբերմունք ունենալ, երբ քեզ հանդիմանում են:**

1. Երբ ինձ հանդիմանում են (կամ քննադատում): Առակաց 10:17
2. Ես ուշադիր կլսեմ: Հակոբոս 1:19
3. Ես շնորհակալ եմ, որ նա ինձ հանդիմանում է:  
Ա Թեսաղոնիկեցիներին 5:18
4. Ես սխալ էի: Առակաց 28:13
5. Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա:  
Առակաց 15:31-32

*Մեջբերումն արված է Վերաբերմունքներ, Ուսանողի ձեռնարկ, էջ 18-ից:*

9. Ուսուցչի գնահատականն այսօրվա դասի վերաբերյալ:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար ամենադժվար հասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:



## Դաս 4. Տարբերակ 2.

**Քո ընտրած վերաբերմունքը . \_\_\_\_\_**

**1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն.**

---



---



---

**2. Բանալի համար.**

---



---



---

**3. Ծրագրավորի՛ր քո ռազմավարությունը:**

Օգտագործի՛ր դասաժամը՝ քննարկելով մեկից ավելի վերաբերմունքներ, որոնք, դու զգում ես, որ կարող են օգտակար լինել քո դասարանի համար: Ուսանողի ձեռնարկի 8-9-րդ էջերում գրի՛ր մի քանի վերաբերմունքներ, որոնց հանդեպ նորադարձ քրիստոնյաները հետաքրքրություն են ցուցաբերել քննարկման ընթացքում: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1.-ը և 2.-ն ունեն հարցեր, որոնք կարող են քեզ տալ օգտակար մտքեր այն բանի վերաբերյալ, ինչը կուզենային քո ուսանողներն ուսումնասիրել:

Ահա մի քանի թեմաներ, որոնք առաջարկվում են այս դասի համար.

- Մեղքի տանող գայթակղություններ, օրինակ՝ կիրք,
- Ինքնակարծիք. վերաբերմունք սեփական անձի մասին,
- Բարկություն,
- Փոխհարաբերություններ մարդկանց հետ:

---



---



#### 4. Բացահայտի՛ր քո ուսանողների հետաքրքրությունները:

Եթե ուզում ես, որ ուսանողներն ակտիվորեն ներգրավվեն այն որոշման մեջ, թե որ վերաբերմունքները պետք է ուսումնասիրվեն, ապա նրանց կարծիքները լսի՛ր նախքան այսօրվա դասը սկսելը: Սա հատկապես կարևոր է, եթե դու ուզում ես նրանց հանձնարարություն տալ այն վերաբերմունքի մասին, որը դուք ուսումնասիրելու եք: Տե՛ս Դասի ծրագիր 3.-ի վերջին մասը՝ նրանց այսօրվա դասի վերաբերյալ տնային աշխատանքի հանձնարարություն տալու համար (18- Զ. կետը՝, Ուսուցչի ձեռնարկ-էջ 40):

#### 5. Ինչպե՞ս զարգացնել նոր վերաբերմունք:

Դու կարող ես օգտագործել որոշ նյութեր Ուսանողի ձեռնարկ, Գլուխ 2.-ից՝ այսօրվա դասի ծրագրավորման համար: Թող ուսանողները նոր վերաբերմունք զարգացնելու վերաբերյալ մտքերը համակցեն այն թեմայի հետ, որը դու ընտրել ես այսօրվա դասի համար:

4

#### 6. Ինչի՞ վրա է կենտրոնանալու այսօրվա քո դասը:

Դու պետք է որոշես, թե ինչպես ես քո դասաժամը բաշխելու հետևյալ թեմաներից յուրաքանչյուրի վրա.

- ա. Տեղյակ լինել այս ասպարեզում նրանց ներկա վերաբերմունքի մասին:
- բ. Որտե՛ղ կարող են նրանք սկսել նոր վերաբերմունք զարգացնել իրենց կյանքի այս ասպարեզում:

#### 7. Օգտագործել աստվածաշնչյան համարներ:

Գրի՛ր մի շարք համարներ, որոնք կապ ունեն այս վերաբերմունքի հետ: Հանձնարարի՛ր, որ նրանք հայտնաբերեն և բացատրեն յուրաքանչյուր համարի կապն այս վերաբերմունքի հետ:

#### 8. Ո՞ր մտքերն են ձևավորում այս նոր վերաբերմունքը:

Հաջորդը. Թող նրանք գրեն մի քանի բանալի մտքեր, որոնք ներառված կլինեն այս նոր վերաբերմունքի մեջ, որը մենք ուզում ենք զարգացնել: Դու կարող ես զարգացնել նմանատիպ մի բան, որ մենք արեցինք այն վերաբերմունքների հետ, որոնք քննարկված են Ուսանողի ձեռնարկ, Գլուխ 3.-ում և 4.-ում: Փորձի՛ր յուրաքանչյուր կետի համար ունենալ մեկական համար:

Այս նոր վերաբերմունքի գործնական կիրառությունը քննարկելու համար օգտագործի՛ր նրանց օրինակները քո տված տնային աշխատանքի հանձնարարություններից:

**9. Անձնական կիրառություն:**

Ջարգացրո՛ւ համապատասխան անձնական կիրառություն այս դասի համար: Ընդգծի՛ր ոչ միայն այս նոր մտածելակերպը անգիր անելու կարևորությունը, այլև քաջալերի՛ր նրանց, որ սկսեն այն կիրառել իրենց իրավիճակների մեջ այս շաբաթվա ընթացքում:

---



---



---



---

**10. Հանձնարարություններ:**

- Ա. Գնահատակա՛ն դիր նրանց հատուկ նախագծին այսօրվա համար:
- Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4.-ի համար, եթե մինչև հիմա դեռ չես արել:
- Գ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5.- համար կամ այսօր, կամ էլ հաջորդ դասին:
- Դ. Բացատրի՛ր քո ուսանողներին, որ նրանք պետք է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8.-ը լրացրած լինեն մինչև հաջորդ դասը, որն այս դասընթացի ստուգարքի ժամանակահատվածն է:
- Ե. ասի վերջին հատվածում, տո՛ւր հարացաշար՝ *«Աստվածաշնչյան վերաբերմունք ունենալ, երբ քեզ հանդիմանում են»* բաժնի վերաբերյալ, եթե անցած դասի վերջում չես արել:



**Աստվածաշնչյան վերաբերմունք ունենալ, երբ քեզ հանդիմանում են:**

1. Երբ ինձ հանդիմանում են (կամ քննադատում): Առակաց 10:17
2. Ես ուշադիր կլսեմ: Հակոբոս 1:19
3. Ես շնորհակալ եմ, որ նա ինձ հանդիմանում է:  
Ա Թեսաղոնիկեցիներին 5:18
4. Ես սխալ էի: Առակաց 28:13
5. Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա:  
Առակաց 15:31-32

*Մեջբերումն արված է Վերաբերմունքներ, Ուսանողի ձեռնարկ, էջ 18-ից:*

**11. Ուսուցչի գնահատականը այսօրվա դասի վերաբերյալ:**

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար ամենադժվար հասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

## Դաս 5: Ստուգարք

### 1. Նախաբան:

Ներկայացրե՛ք հաջորդ դասընթացը:

- Ա. Բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը, կամ այլ նախագծեր, որոնք պետք է լրացվեն՝ նախքան դուք դրանք կուսուցանեք հաջորդ դասընթացի առաջին դասին:
- Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ կգտնեն *Դասարանական Հանձնարարության Ցուցակի* չլրացված բլանկի մի օրինակ: Ասացե՛ք նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ժամկետները:
- Գ. Բաժանե՛ք նոր Ուսանողի ձեռնարկը և ասացե՛ք նրանց, թե որ էջն էք ուզում, որ նրանք կարդան՝ նախքան հաջորդ դասը սկսվելը:

### 2. Ստուգա՛րք անցկացրեք այս դասընթացի վերաբերյալ:

### 3. Եթե դեռ չեք արել, ապա վերադարձրե՛ք այն բոլոր հարցաշարերը և նախագծերը, որոնց դուք գնահատական եք դրել:

Այս *Վերաբերմունքներ* դասընթացի համար դու կարող էիր որոշել, որ Ուսուցման ուղեցույց, Նախագծեր 5., 8., 9. և 10.-ը այսօր բաժանեիր:

**5**



## Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝  
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպե՛ս օգտագործել Ուսանողի  
ձեռնարկը:

## Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝  
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման  
ուղեցույցը:



## Ստուգարք և Վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝  
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպե՛ս օգտագործել Ստուգարքն ու  
Վկայականը:



Անուն \_\_\_\_\_

Վերաբերմունքներ

Ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Դասարան \_\_\_\_\_

\_\_\_\_\_ դասարան

**Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 1 միավոր)**

**Ցուցումներ.** Դի՛ր  X, եթե պատասխանը ճիշտ է:

Դի՛ր  O, եթե պատասխանը սխալ է:

1. \_\_\_\_\_ Վերաբերմունքը նույն բանն է, ինչ՝ զգացմունքը:
2. \_\_\_\_\_ Հիսուսի ունեցած վերաբերմունքները լավագույնն են օգտագործելու համար, եթե ուզում ես հաջողակ քրիստոնյա լինել:
3. \_\_\_\_\_ Մարդիկ վերաբերմունքն օգտագործում են միայն այն ժամանակ, երբ ինչ-որ բանի համար վրդովված են:
4. \_\_\_\_\_ Երբ ինձ հանդիմանում են, ես պետք է ուշադիր լսեմ, եթե վստահ չեմ, որ ես ճիշտ եմ:
5. \_\_\_\_\_ Եթե գիտես, որ ինչ-որ մեկը սխալ բան է արել, պետք է հանդիմանես նրան, եթե անգամ դու այդ խնդրի մեջ մաս ես կազմում:
6. \_\_\_\_\_ Վերաբերմունքը քո մտածելակերպն է ինչ-որ բանի վերաբերյալ:
7. \_\_\_\_\_ Պատկերացնելը կարող է արդյունավետ միջոց լինել աստվածաշնչյան վերաբերմունք զարգացնելու հարցում:
8. \_\_\_\_\_ Եթե մարդը վատ վերաբերմունք ունի, հետևաբար դա նաև մեկ ուրիշի սխալն է:
9. \_\_\_\_\_ Մարդու վերաբերմունքները շատ քիչ ազդեցություն ունեն նրա կյանքի առօրյայի վրա, և այն բանի, թե ինչպես է նա պատասխանում իրավիճակներին:
10. \_\_\_\_\_ Մարդը ոչինչ չի կարող անել, որպեսզի փոխի իր վերաբերմունքները, որոնք նա սովորել է մանկուց:
11. \_\_\_\_\_ Միակ ձևը, որով մարդը ցույց է տալիս իր վերաբերմունքը, խոսելու միջոցն է:
12. \_\_\_\_\_ Երբ ինչ-որ մեկը սկսում է քեզ հանդիմանել, առաջինը, որ դու պետք է անես, ստիպես նրան՝ նախ լսել այդ պատմությունը քո կողմից:
13. \_\_\_\_\_ Երբ ինչ-որ մեկը քեզ հանդիմանում է, շատ ավելի լավ է բարկությանը պատասխանել, քան տխրությանը:
14. \_\_\_\_\_ Երբ ինչ-որ մեկը սխալ ձևով է քեզ հանդիմանում, դու անմիջապես պետք է նրան ասես, թե ինչն է սխալ անում:
15. \_\_\_\_\_ Ամեն անգամ, երբ դու ինչ-որ մեկին հանդիմանում ես, պետք է նրան ասես, թե ինչն է նա սխալ արել:

## Կարճ պատասխանով հարցեր

1. Նշի՛ր աստվածաշնչյան վերաբերմունք օգտագործելու երեք օգուտներ, երբ քեզ հանդիմանում են (9 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր):

Ա. \_\_\_\_\_

Բ. \_\_\_\_\_

Գ. \_\_\_\_\_

2. Ի՞նչ է վերաբերմունքը (4 միավոր):

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

3. Ի՞նչ ձևերով է մարդն արտահայտում իր վերաբերմունքը: Նշի՛ր դրանցից երեքը (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

Ա. \_\_\_\_\_

Բ. \_\_\_\_\_

Գ. \_\_\_\_\_

4. Ի՞նչ է նշանակում՝ աստվածաշնչյան վերաբերմունք կիրառել, երբ քեզ հանդիմանում են: Նշի՛ր հինգ մտքեր՝ ներկայացնելու համար աստվածաշնչյան վերաբերմունքը, որի մասին անցել էք այս դասընթացի ժամանակ (10 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

Ա. \_\_\_\_\_

Բ. \_\_\_\_\_

Գ. \_\_\_\_\_

Դ. \_\_\_\_\_

Ե. \_\_\_\_\_

5. Ի՞նչ է նշանակում՝ աստվածաշնչյան վերաբերմունք օգտագործել, երբ հանդիմանում ես ինչ-որ մեկին: Նշի՛ր չորս մտքեր՝ ներկայացնելու համար աստվածաշնչյան վերաբերմունքը, որի մասին անցել էք այս դասընթացի ժամանակ (8 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

Ա. \_\_\_\_\_

Բ. \_\_\_\_\_

Գ. \_\_\_\_\_

Դ. \_\_\_\_\_



**Օրինակի ուսումնասիրություն**

Լաքեշան բարկացած է: Պամելան հենց նոր նրան նեղացրել է ողջ դասարանի առաջ: Լաքեշան դասարանի դռան մոտ բարկացած սպասում է Պամելային: «Ինչի՞ տեղ ես քեզ դրել, որ իմ ժողովրդին անգրագետ ստրուկներ ես անվանում», - ասում է Լաքեշան: «Իսկ դու էլ սպիտակ կեղտ ես», - բորբոքված բղավում է Լաքեշան Պամելայի վրա, և դասընկերները ծիծաղում են վերջինիս վրա:

Դու ներկա էիր դասարանում և լսեցիր, թե ինչ ասաց Պամելան: Դու նաև տեսար Լաքեշայի բարկացած պատասխանը դրանից հետո: Ե՛վ Լաքեշան, և՛ Պամելան գալիս են ձեր եկեղեցի և, այսպես ասած, քրիստոնյաներ են:

1. Դու որոշել ես խոսել Պամելայի հետ և հանդիմանել նրան:

Ա. Ի՞նչն էր, քո կարծիքով, Պամելայի արարքի մեջ սխալ (2 միավոր):

---

---

Բ. Ի՞նչ կասեիր դու Պամելային ուրիշին հանդիմանելու վերաբերյալ՝ այս շաբաթ քո սովորած դասի հիման վրա (10 միավոր):

---

---

---

---

---

---

2. Դու նաև որոշել ես խոսել Լաքեշայի հետ և հանդիմանել նրան:

Ա. Ի՞նչն էր, քո կարծիքով, Լաքեշայի արարքի մեջ սխալ (2 միավոր):

---

---

Բ. Ի՞նչ կասեիր դու Լաքեշային ուրիշին հանդիմանելու վերաբերյալ՝ այս շաբաթ քո սովորած դասի հիման վրա (10 միավոր):

---

---

---

---

---

---

**Վերաբերմունքներ**  
Ստուգարք, 5-րդ խմբագրում  
Պատասխաններ

Էջ 1

**Ճիշտ-սխալ հարցեր**

Յուրաքանչյուրը 1 միավոր

1. 0 Սխալ

2. 0 Ճիշտ

3. 0 Սխալ

4. 0 Սխալ

5. 0 Սխալ

6. X Ճիշտ

7. X Ճիշտ

8. 0 Սխալ

9. 0 Սխալ

10. 0 Սխալ

11. 0 Սխալ

12. 0 Սխալ

13. 0 Սխալ

14. 0 Սխալ

15. 0 Սխալ

**Վերաբերմունքներ**  
**Ստուգաբք, 5-րդ խմբագրում**  
**Պատասխաններ**

**Էջ 2**

**Կարճ պատասխանով հարցեր**

(Առաջարկվող պատասխանները չեն պահանջում բառ առ բառ բացատրություններ, որպեսզի համարվեն ճիշտ):

1. 9 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր  
Առաջարկվող պատասխաններ.
  - Ա. Դու կանխում ես բազմաթիվ խնդիրներ:
  - Բ. Դու ուրախացնում ես Աստծուն:
  - Գ. Դու կարողանում ես ցավալի իրավիճակը փոխել աճելու հնարավորության:
  - Դ. Դու կարողանում ես ամուր ընկերություն կառուցել:
  
2. 4 միավոր  
Առաջարկվող պատասխաններ.
  - Ա. Մտածելու օրինակ:
  - Բ. Կարծիք:
  - Գ. Մտածելակերպ:
  - Դ. Մտածելու սովորություն:
  - Ե. Տեսակետ:
  - Զ. Մտքեր, որ ես սովորել եմ:
  - Է. Մտային դիրք՝ կապված փաստի կամ իրավիճակի հետ:
  
3. 6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր  
Առաջարկվող պատասխաններ.
  - Ա. Ինչպես է նա ասում:
  - Բ. Ինչպես է նա անում:
  - Գ. Քո ձայնի տոնայնությունը:
  
4. 10 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր  
Առաջարկվող պատասխաններ.
  - Ա. Երբ ինձ հանդիմանում են:
  - Բ. Ես ուշադիր կլսեմ:
  - Գ. Ես շնորհակալ եմ, որ նա ինձ հանդիմանում է:
  - Դ. Ես սխալ եմ:
  - Ե. Ինչպես կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա:



**Վերաբերմունքներ**  
**Ստուգարք, 5-րդ խմբագրում**  
**Պատասխաններ**

**Էջ 3**

5. 8 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր  
Առաջարկվող պատասխաններ.

Ա. Այս անձնավորությունն Աստծո հատուկ ընկերներից մեկն է: Ես ուզում եմ, որ կարողանամ նրա մասին լավ վկայություն տալ:

Բ. Ի՞նչ սխալ է արել այս անձնավորությունը:

Գ. Ո՞րն է Աստծո ձևը այս խնդիրն ուղղելու հարցում:

Դ. Ինչպե՞ս կարող եմ օգնել այս անձնավորությանը՝ հետևել Աստծո ճանապարհին:

6. 12 միավոր, յուրաքանչյուրը 4 միավոր  
Ուսանողները կարող են սա գրել իրենց սեփական բառերով:

Ա. Մատթեոս 18:15. «Եթե եղբայրդ քեզ դեմ մեղանչի, գնա՛ և հանդիմանի՛ր նրան, երբ դու և նա մենակ եք. եթե քեզ չսի՝ շահած կլինես քո եղբորը»:

Բ. Մատթեոս 18:16. «Իսկ եթե չլսի, ապա քեզ հետ վերցրու մեկ կամ երկու հոգի, որ երկու կամ երեք վկայի բերանով ամեն բան հաստատվի»:

Գ. Մատթեոս 18:17. «Եվ եթե նրանց էլ չլսի, հայտնի՛ր եկեղեցուն, իսկ եթե եկեղեցուն էլ չլսի, թող նա քեզ համար մի հեթանոսի ու մաքսավորի պես լինի»:

7. Անգիր համարներ  
12 միավոր, յուրաքանչյուրը 6 միավոր

Առակաց 10:17

Գաղատացիներին 6:1

**Վերաբերմունքներ**  
**Ստուգարք, 5-րդ խմբագրում**  
**Պատասխաններ**

**Էջ 4**

**Օրինակի ուսումնասիրություն.** ներքևում նշված պատասխանները բոլորն էլ առաջարկվող պատասխաններ են.

1. Ա. (2 միավոր)

Պեմը սխալ էր, երբ ասաց, որ Լաբեշայի նման մարդիկ անգրագետ ստրուկներ էին: Նա սխալ էր իր արձագանքի մեջ, երբ իմացավ, որ նեղացրել է Լաբեշային:

Բ. (10 միավոր)

Նրանց պատասխանները պետք է համապատասխան լինեն դասընթացի ժամանակ քննարկված՝ հանդիմանելու մեթոդներից որևէ մեկին:

2. Ա. (2 միավոր)

Լաբեշան սխալ էր Պեմին ընդհանուրի, հատկապես նրա ընկերների մոտ հանդիմանելու հարցում: Լաբեշան սխալ էր Պեմին «սպիտակ կեղտ» անվանելու հարցում:

Բ. (10 միավոր)

Մեկնաբանություններ ինչպես 1.Բ. կետում:

## Շնորհավորում ենք

\_\_\_\_\_

-ին, առ այն, որ նա ավարտել է

## Վերաբերմունքներ

դասընթացի ուսումնական պահանջները:

Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ \_\_\_\_\_

Ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_

## Շնորհավորում ենք

\_\_\_\_\_

-ին, առ այն, որ նա ավարտել է

## Վերաբերմունքներ

դասընթացի ուսումնական պահանջները:

Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ \_\_\_\_\_

Ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_